

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն h. 1

2022թ. Օգոստոսի 29-ին կայացած Տեխնոլոգիական կրթության ամբիոնի նիստի

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. Ամբիոնի պրոֆեսորա-դասախոսական անձնակազմի 2022-2023 ուս-տարվա բեռնվածությունների մասին:
2. Ամբիոնի տարեկան աշխատանքային պլանի քննարկում և հաստատում:
3. 2022-2023 ուս-տարվա առարկաների դասախոսությունների դասավանդման գործընթացի կազմակերպման, ուսումնական լաբորատորիաների և արհեստանոցների նախապատրաստման և լաբորատոր փորձերի անցկացման մասին:
4. 2022-2023 ուսումնական տարվա առարկայական ուսումնամեթոդական փաթեթների վերանայում, քննարկում և հաստատում:
5. Ընթացիկ հարցեր:

Նիստին ներկա էին ամբիոնի անդամ (ներկայաթերթը կցվում է):

Միաձայն հաստատվեց օրակարգը:

1. ԼՍԵՑԻՆ – Ամբիոնի պրոֆեսորա-դասախոսական անձնակազմի 2022-2023 ուս-տարվա բեռնվածությունների մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – 1) Սահրադյան Ա.- Հարգելի գործընկերներ, առաջարկում եմ ծանոթանալ 2022-2023 ուսումնական տարվա բեռնվածությանը:

Ամբիոնում պրոֆեսորադասախոսական անձնակազմի բեռնվածության բաշխումն արդեն հաստատվել է: 2022-2023թթ. ուսումնական տարվա ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմի ծանրաբեռնվածությունները հետևյալն են.

1. Սահրադյան Արտակ Իսրայելի - տ.գ.դ., պրոֆեսոր, 1,0 հաստիք,
2. Այվազյան Տիգրան Մկրտչի - ֆ.-մ.գ.թ., պրոֆեսորի պաշտ., 1,0 հաստիք,
3. Խողերյան Բորիս Արտյոմի - տ.գ. թ., դոցենտ, 0,75 հաստիք,
4. Օրդյան Նունե Ալբերտի - տ.գ. թ., դոցենտ, 0,5 հաստիք,
5. Վարդանյան Սոնյա Ոսկանի - տ.գ. թ., դոցենտ, 1,0 հաստիք,
6. Հարությունյան Աշոտ Հրայրի - դոցենտ, 1,0 հաստիք:

Քննարկման արդյունքում

ՈՐՈՇԵՑԻՆ – 2022-2023 ուսումնական տարվա ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմի ծանրաբեռնվածությունների մասին տեղեկությունն ընդունելի գիտություն:

2. ԼՍԵՑԻՆ -Ամբիոնի տարեկան աշխատանքային պլանի քննարկում և հաստատում:
(տարեկան աշխատանքային պլանը կցվում է):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Սահրադյան Ա.-Ձեր քննարկմանն եմ ներկայացնում ամբիոնի տարեկան աշխատանքային պլանի և գործընթացի գրաֆիկի ժամանակացույցը: Եթե կան առաջարկներ խնդրում եմ ներկայացնել: Փոփոխությունների դեպքում նախօրոք դասախոսները կտեղեկացվեն:

Պատրաստ են նաև դասացուցակները:

Քննարկման արդյունքում

ՈՐՈՇԵՑԻՆ- Հաստատել 2022-2023 ուսումնական տարվա տարեկան աշխատանքային պլանը:

3. ԼՍԵՑԻՆ -2022-2023 ուս-տարվա առարկաների դասախոսությունների դասավանդման գործընթացի կազմակերպման մասին:

Ուսումնական լաբորատորիաների և արհեստանոցների նախապատրաստման և լաբորատոր փորձերի անցկացման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Ա.Սահրադյան-Հարգելի գործընկերներ, այս ուսումնական տարում մեր մասնագիտության դասերը կլինեն առերես, իսկ մագիստրատուրայում նաև առցանց: Classroom հարթակում պետք է տեղադրված լինի ուսումնական փաթեթները և առարկայական նկարագրերը, ինչպես նաև թեմաները և լաբորատոր փորձերի անցկացման մեթոդական ցուցումները:

Այժմ խոսքը տանք մետաղամշակման և փայտամշակման արհեստանոցի ղեկավարին և լաբորանտներին:

Գ.Տաբիրյան-Արհեստանոցում կատարվելիք լաբորատոր փորձերի համար ամեն ինչ պատրաստ է: Պահպանում ենք անվտանգության կանոնները:

Կ.Զաքարյան-407 լաբորատորիայում էլ ամեն ինչ պատրաստ է դասապրոցեսի համար՝ լաբորատոր փաթեթները և փորձերը:

Հ.Հովհաննիսյան- Այս կիսամյակում 404 լաբորատորիայում նախատեսված էր կարի մոդելավորման լաբորատոր դասերը: Դասապրոցեսի համար պատրաստ են և կարի մեքենաները և կարի համար նախատեսված այլ պարագաներ:



ՈՐՈՇԵՑԻՆ-2022-2023 ուս-տարվա առարկաների դասախոսությունների դասավանդման գործընթացի կազմակերպումը ընդունելի գիտություն:

Լաբորատորիաների վիճակը համարել բավարար:

4. ԼՍԵՑԻՆ -2022-2023 ուսումնական տարվա առարկայական ուսումնամեթոդական փաթեթների քննարկում և հաստատում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Ա.Սահրադյան-Հարգելի դասախոսներ, քանի որ մեր ուսումնամեթոդական փաթեթներն արդեն պատրաստ են, ուստի խնդրում եմ մեկ անգամ ևս ուսումնասիրել այն և վերանայել: Եթե փոփոխության կարիք լինի, փոփոխեք և առաջարկում եմ ուս. փաթեթները վերահաստատենք 29.08.2022թ-ով:

ՈՐՈՇԵՑԻՆ-2022-2023 ուսումնական տարվա առարկայական ուսումնամեթոդական փաթեթները վերահաստատել 29.08.2022թ-ով:

Նիստի նախագահ՝		Ա.Ի. Սահրադյան
Քարտուղար՝		Ս.Ո. Վարդանյան

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ի Թ Յ Ո Ի Ն հ. 2

2022թ. սեպտեմբերի 26-ին կայացած Տեխնոլոգիական կրթության
ամբիոնի նիստի

Օրակարգում՝

1. Ուսումնական գործընթացների ընթացքն ամփոփում:

Ձեկ. դասախոսներ

2. Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների քննարկում և հաստատում:

3. Դասալսումների գրաֆիկի հաստատումը:

4. Հեռակա բաժնի 2021-2022 ուստարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի արդյունքների ամփոփում:

Ձեկ. Ս.Վարդանյան

5. Շարունակական մանկավարժական պրակտիկայի կազմակերպման մասին:

Ձեկ. Բ.Խողերյան

6. 2022-2023 ուսումնական տարվա դասախոսի անհատական աշխատանքային պլանների քննարկում և հաստատում:

7. Ընթացիկ հարցեր:

Նիստին ներկա էին ամփոփի դասախոսները և աշխատակիցները (ներկայաթերթը կցվում է):

Միաձայն հաստատվեց օրակարգը:

1. ԼՍԵՑԻՆ – Ուսումնական գործընթացների ընթացքն ամփոփում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – 1) Ս.Վարդանյան-Ես դասավանդում եմ 2-րդ, 4-րդ բակալավրիատում և 1-ին մագիստրատուրայում: Հաճախումները նորմալ են, դասապրոցեսը՝ նույնպես:

2) Բ. Խողերյան-Ես դասավանդում եմ բակալավր 3-րդ, 4-րդ կուրսերում և մագիստրատուրա 1-ին, 2-րդ կուրսերում: Դասերը ընթանում են նորմալ: Մյուս շաբաթ, 2-րդ կուրսի մագիստրոսներին կհրավիրենք առերես հանդիպման:

3) Ն.Օրդյան- Ես դասավանդում եմ բակալավր 3-րդ և մագիստրատուրայի 2-րդ կուրսում: Ինձ մոտ էլ ամեն ինչ նորմալ է: Հաճախումները նորմալ են: Նրանք, ովքեր բացակայում են առերես հանդիպումներից, դասերին մասնակցում են օնլայն:

4) Ա.Հարությունյան-Այս կիսամյակում ես դասավանդում եմ բակալավր 2-րդ, 3-րդ և 4-րդ կուրսերում կուրսերում: Բացակայություններ գրեթե չեն լինում: Դասի ընթացքը նորմալ է:

5)Տ.Այվազյան-Ես դասավանդում եմ 3-րդ բակալավրիատում և 1-ի մագիստրատուրայում: Ամեն ինչ նորմալ է:

6)Ա.Սահրադյան-Այս կիսամյակում ես դասավանդում եմ բակալավրիատի 2-րդ և 4-րդ կուրսերում և մագիստրատուրայի 2-րդ կուրսում: Մագիստրոսների մոտ դասերն առցանց են: Ինձ մոտ էլ ոչ մի խնդիր չկա:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ուսումնական գործընթացը համարել բավարար:

2. ԼՍԵՑԻՆ – Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների քննարկում և հաստատում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ա.Սահրադյան- Այս ուսումնական տարում 1-ին մագիստրատուրայում ունենք 5 ուսանող, իսկ հեռակա 5-րդ կուրսում՝ 22 ուսանող:

Ըստ դասաբաշխման այս ուսումնական տարում մագիստրոսական թեզ և ավարտական աշխատանք են ղեկավարելու ամբիոնի ներքոնշյալ դասախոսները.

h/h	Գիտական ղեկավար	Մագիստրոսական թեզերի քանակը	Ավարտական աշխատանքների քանակը
1.	Սահրադյան Ա.Ի.	2	3
2.	Այվազյան Տ.Մ.	-	4
3.	Վարդանյան Ս.Ո.	1	3
4.	Խողերյան Բ.Ա.	-	4
5.	Օրդյան Ն.Ա.	-	3
6.	Հարությունյան Ա.Հ.	2	3

Խնդրում եմ ղեկավար դասախոսները ամբիոնի քննարկմանը ներկայացնեն մագիստրոսական թեզի և ավարտական աշխատանքների վերնագրերը :

Քննարկման արդյունքում

ՈՐՈՇԵՑԻՆ -Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների վերնագրերը ներկայացնել սեղմ ժամկետում:

3. ԼՍԵՑԻՆ - Դասալսումների գրաֆիկի հաստատումը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Ա.Սահրադյան-Այս կրսամյակում դասալսումներ կլինեն յուրաքանչյուր դասախոսի մոտ մեկ անգամ հետևյալ գրաֆիկով.

հհ	Դասախոսի անուն, ազգանուն	Դասալսման օր
1	Խոդերյան Բորիս	10.10.2022
2	Այվազյան Տիգրան	25.10.2022
3	Հարությունյան Աշոտ	27.09.2022
4	Օրդյան Նունե	10.11.2022
5	Վարդանյան Սոնյա	09.12.2022

ՈՐՈՇԵՑԻՆ- Դասալսումների գրաֆիկը հաստատել և ընդունել ի գիտություն:

4. ԼՍԵՑԻՆ - Հեռակա բաժնի 2021-2022 ուս. տարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի արդյունքների ամփոփում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-1) Սահրադյան Ա.- Հեռակա բաժնի 2021-2022 կիսամյակի քննաշրջանի արդյունքների մասին կներկայացնի դոցենտ Ս.Վարդանյանը:

2) Ս.Վարդանյան- Հեռակա կուրսերի 2-րդ կիսամյակի ամփոփիչ քննություններն արդեն ավարտվել են: Ուսանողները քննաշրջանի ընթացքում իրենց դրսևորել են լավ և ցուցաբերել են բարձր առաջադիմություն: Սակայն կան ուսանողներ, ովքեր տարբեր առարակներից ունեն լուծարքներ:

Առարկա	Կուրս	Անբավարար ստացած և չներկայացած ուսանողների քանակը
Կոնստրուկցիոն նյութերի տեխնոլոգիա	2-րդ	1 չն
Տեխնիկական առարակների դասավանդման մեթոդիկա	3-րդ	Գևորգյան Նարեկը՝ 0 միավոր
Հագուստի պատրաստման տեխնոլոգիա	3-րդ	Գևորգյան Նարեկը՝ 0 միավոր

Գծագրական երկրաչափություն	1-ին	6 չն
Գծագրություն	2-րդ	1 չն
Կիրառական մեխանիկա	3-րդ	Գևորգյան Նարեկ՝ 0 միավոր
Ագրոտեխնիկական մեքենաներ	4-րդ	5 չն
Կուսային աշխատանքից		2 չն
Մանկավարժական պրակտիկա	3-րդ	2 չն
Տեխ. պրակտիկում	1-ին	4 չն
Տեխ. պրակտիկում	2-րդ	4 չն
Կուրսային աշխատանք		1 չն

Նշեմ նաև, որ 02.10.22-20.10.22 սահմանված է լուծարքների ժամանակաշրջան:

ՈՐՈՇԵՑԻՆ- 1)Պարզել քննություններին ուսանողների չներկայանալու պատճառ:

2)Հեռակա բաժնի 2021-2022 ուս. տարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի արդյունքները համարել բավարար,

5. ԼՍԵՑԻՆ – Շարունակական մանկավարժական պրակտիկայի կազմակերպման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – 1) Սահրադյան Ա.- Շարունակական մանկավարժական պրակտիկայի կազմակերպման և անցկացման մասին կներկայացնի դոցենտ Բ.Խողերյանը:

2)Խողերյան Բ.- Այս կիսամյակում շարունակական պրակտիկա ունեն բակալավրիատի 3-րդ կուրսի ուսանողները, ովքեր պետք է շաբաթական մեկ օր անցկացնեն դպրոցում, ծանոթանան դպրոցի կարգ ու կանոնին, դասապրոցեսին, ինչպես նաև դասավանդեն «Տեխնոլոգիա» առարկան:

Պրակտիկայի մեթոդիստն է ֆիզ.-մաթ. գիտ. թեկնածու, պրոֆ. պաշտ. Տ.Մ.Այվազյանը:

Կազմակերպչական հարցերի հետ կապված ամեն ինչ նորմալ է՝ գրությունները պատրաստ են, ստորագրված և հաստատված: Շարունակական մանկավարժական

պրակտիկայի ուսումնամեթոդական փաթեթը տեղադրված է Classroom էլեկտրոնային հարթակում: Ուսանողների հետ միասին արդեն իսկ եղել ենք Երևանի թիվ 57 դպրոց, հանդիպել տնօրենի, փոխտնօերնի և դասավանդող ուսուցիչների հետ: Կարծում եմ որևէ խնդիր չի առաջանա:

ՈՐՈՇԵՑԻՆ – Շարունակական մանկավարժական պրակտիկայի կազմակերպման գործընթացը համարել բավարար:

6. ԼՍԵՑԻՆ–2022-2023 ուս. տարվա դասախոսների անհատական աշխատանքային պլանների քննարկման և հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ–Ա.Սահրադյան-Հարգելի դասախոսներ ինչպես նախորդ ուսումնական տարիներին, այնպես էլ այս ուսումնական տարում պետք է ունենաք Ձեր անհատական աշխատանքային պլանները: Ուստի խնդրում եմ մինչև հաջորդ շաբաթ ներկայացրեք Ձեր անհատական աշխատանքային պլանները:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունելի գիտություն:



Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ի Թ Յ Ո Ի Ն հ. 3

2022թ. հոկտեմբերի 25-ին կայացած Տեխնոլոգիական կրթության ամբիոնի նիստի

Օրակարգում՝

1. Ուսումնական գործընթացների ընթացքն ամբիոնում:

Ձեկ.դասախոսներ

2. Ավարտական դիպլոմային աշխատանքների թեմաների քննարկում և հաստատում:

3. 2-րդ կուրսի մագիստրոսական թեզերի կատարման ընթացքը:

Ձեկ. թեզերի ղեկավարներ

4. Կրթության էլեկտրոնային հարթակում (Google Classroom) դասախոս-ուսանող հաղորդակցման վիճակի և խնդիրների մասին:

Ձեկ. դոցենտ Ս.Վարդանյան

5. Միջանկյալ քննությունների նախապատրաստում, տոմսերի վերահաստատում:

6. Ընթացիկ հարցեր:

Նիստին ներկա էին ամբիոնի դասախոսները և աշխատակիցները (ներկայաթերթը կցվում է):

Միաձայն հաստատվեց օրակարգը:

1. ԼՍԵՑԻՆ – Ուսումնական գործընթացների ընթացքն ամբիոնում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – 1) Բ. Խողերյան- Դասավանդում էմ բակալավր 3-րդ, 4-րդ կուրսերում և մագիստրատուրա 1-ին, 2-րդ կուրսերում: Մագիստրոս 2-րդ կուրսերը այս շաբաթ հետազոտական պրակտիկայի են: Դասերը ընթանում են նորմալ:

2) Ա.Հարությունյան-Այս կիսամյակում ես դասավանդում էմ բակալավր 2-րդ, 3-րդ, 4-րդ կուրսերում կուրսերում և մագիստրատուրա 1-ին կուրսում: Բացակայություններ գրեթե չեն լինում: Ամսի 27-ից սկսվում է 2-րդ և 3-րդ կուրսերի միջանկյալ ստուգումը: Որևէ խնդիր չկա:

3) Ս.Վարդանյան-Ես դասավանդում էմ 2-րդ, 4-րդ բակալավրիատում և 1-ին մագիստրատուրայում: Ուսումնական գործընթացն իրականացվում է լիարժեք: Հաճախումները նորմալ են:

4) Ն.Օրդյան- Ես դասավանդում էմ բակալավր 3-րդ և մագիստրատուրայի 2-րդ կուրսում: Ինձ մոտ էլ ամեն ինչ նորմալ է: Հաճախումները նորմալ են: Ինչպես արդեն նշեցինք մյուս շաբաթ սկսվում է 2-րդ և 3-րդ կուրսերի առաջին միջանկյալ ստուգումները: Իսկ մագիստրատուրա 2-րդ կուրսը անցնում է հետազոտական պրակտիկա:

5)Տ.Այվազյան-Ես դասավանդում էմ 3-րդ բակալավրիատում և 1-ին մագիստրատուրայում: Բակալավր 3-րդ կուրսերի հետ մյուս շաբաթ գրելու ենք առաջին միջանկյալ գրավորները՝ «Էլեկտրատեխնիկա» և «Կիրառական մեխանիկա» առարկաներից: Ինձ մոտ ամեն ինչ նորմալ է:

6) Ա.Սահրադյան-Այս կիսամյակում ես դասավանդում եմ բակալավրիատի 2-րդ և 4-րդ կուրսերում և մագիստրատուրայի 2-րդ կուրսում: Այս շաբաթ մագիստրոսները հետազոտական պրակտիկայի են, և ինչպես նշեցինք արդեն, բակալավր 2-րդ կուրսերի հետ գրելու ենք առաջին միջանկյալ ստուգումը: Հաճախումները նորմալ են: Ինձ մոտ էլ ոչ մի խնդիր չկա:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ուսումնական գործընթացը համարել բավարար:

2. ԼՍԵՑԻՆ – Ավարտական դիպլոմային աշխատանքների թեմաների քննարկում և հաստատում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ա.Սահրադյան- Այս ուսումնական տարում ավարտական դիպլոմային աշխատանք պետք է կատարեն թվով 3 ուսանող տեխ.գիտ.թեկնածու, դոցենտներ Ս.Վարդանյանի, Ն.Օրդյանի և Բ.Խոդերյանի ղեկավարությամբ:

Ղեկավար դասախոսները ամբիոնի քննարկմանն են ներկայացրել ավարտական աշխատանքների վերնագրերը, որոնք առանձնանում են իրենց արդիականությամբ և համապատասխան են ներկայացվող պահանջներին:

Քննարկման արդյունքում

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել ավարտական աշխատանքների թեմաները

3. ԼՍԵՑԻՆ – 2-րդ կուրսի մագիստրոսական թեզերի կատարման ընթացքը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-1) Ա.Սահրադյան- Հարգելի մագիստրոսական թեզերի ղեկավարներ խնդրում եմ ներկայացնել թեզերի կատարման ընթացքը:

2) Բ. Խոդերյան – Իմ ղեկավարությամբ մագիստրոսական թեզ է կատարում Պետրոսյան Համլետը «Սովորողների տեխնիկական ստեղծագործական ունակությունների զարգացումը կրթական ռոբոտատեխնիկայի միջոցով» թեմայով: Աշխատանքի 70% կատարված է: Արդեն աշխատում է մեթոդական բաժնի վրա:

3) Ա.Հարությունյան-Իմ ղեկավարությամբ մագիստրոսական աշխատանք է կատարում Սարգսյան Կարինեն ««Փայտամշակման տեխնոլոգիա» բաժնի դասավանդման առանձնահատկությունները միջին դպրոցում» թեմայով: Կարինեի

աշխատանքը պատրաստ է 50%-ով: Այս ուսումնական տարի կաշխատի ավելի արդյունավետ, և վստահ եմ որ կհասնի գերազանց արդյունքի:

4) Տ.Այվազյան – Իմ ղեկավարությամբ հետազոտական աշխատանք է կատարում Գրիգորյան Միլենան ««Էլեկտրական եներգիայի ստացումը վերականգնվող եներգիայի աղբյուրների օգտագործմամբ» թեմայի դասավանդման մեթոդիկական միջին մասնագիտական հաստատություններում» թեմայով: Մագիստրոսն արդեն կատարել է բավականին մեծ աշխատանքը: Ամեն ինչ կարգին է: Վստահ եմ կհասցնի մինչև պաշտպանություն:

ՈՐՈՇԵՑԻՆՆ- Մագիստրոսական թեզերի կատրաման ընթացքը համարել բավարար:

4. ԼՍԵՑԻՆ – Կրթության էլեկտրոնային հարթակում (Google Classroom) դասախոս-ուսանող հաղորդակցման վիճակի և խնդիրների մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-1) Սահրադյան Ա.- Կրթության էլեկտրոնային հարթակում (Google Classroom) դասախոս-ուսանող հաղորդակցման վիճակի և խնդիրների մասին կներկայացնի դոցենտ Ս.Վարդանյանը:


2) Ս.Վարդանյան- Կրթության էլեկտրոնային հարթակում ամբիոնը որևէ խնդիր չունի: Յուրաքանչյուր ամիս ամբիոնի որակի պատասխանատույի կողմից իրականացվում է մշտադիտարկում և հաշվետվության տեսքով ներկայացվում ֆակուլտետի որակի պատասխանատուին: Նշեմ նաև, որ պետք է յուրաքանչյուր դասընթացում դրվի գնահատվող առաջադրանք, որի գնահատականը կարող է լինել նաև ընթացիկ ստուգման գնահատական:

ՈՐՈՇԵՑԻՆՆ- 1) Կրթության էլեկտրոնային հարթակում (Google Classroom) դասախոս-ուսանող հաղորդակցման վիճակը համարել բավարար:

5. ԼՍԵՑԻՆ – Միջանկյալ քննության նախապատրաստում, տոմսերի վերահաստատում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – 1) Սահրադյան Ա.- Հոկտեմբերի 27-ից նոյեմբերի 3-ը տեղի է ունենալու 1-3-րդ կուրսերի առաջին միջանկյալ ստուգումները: Դասախոսները ամբիոնի քննարկման են ներկայացրել առաջին միջանկյալ ստուգման հարցատոմսերը: Առաջարկում եմ վերահաստատել այսօրվա ամսաթվով:

ՈՐՈՇԵՑԻՆ – Միջանկյալ քննության տոմսերը վերահաստատել այսօրվա
ամսաթվով՝ 25.10.2022թ.:



Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ի Թ Յ Ո Ի Ն հ. 4

2022թ. նոյեմբերի 25-ի տեղի ունեցած Տեխնոլոգիական

կրթության ամբիոնի նիստի

Օրակարգում՝

1. Ուսումնական գործընթացների ընթացքն ամբիոնում:
2. Մանկավարժական պրակտիկայի ընթացքի մասին:
Զեկ.դոցենտ Բ.Խողրեյան
3. Միջանկյալ քննությունների առաջին փուլի արդյունքների ամփոփում:
Զեկ.դոցենտ Ս.Վարդանյան
4. 2-րդ միջանկյալ և ամփոփիչ ստուգումների քննատոմսերի հաստատում:
5. Ընթացիկ հարցեր
5.1 Ամբիոնի հայցորդ Գոհար Գրիգորյանի հաշվետվությունը 2022-2023ուս. տարվա 1-ին կիսամյակում կատարած աշխատանքների մասին:

5.2 Տեխնոլոգիական կրթության ամբիոնի 2022թ.ամբիոնի տարեկան հաշվետվությունը:

5.3 ՀՊՄՀ-ի և ՀՊՄՀ Արհեստակցական կազմակերպության միջև կնքվելիք Կոլեկտիվ պայմանագրի նախագիծը:

Նիստին ներկա էին ամբիոնի դասախոսները և աշխատակիցները, Արհեստակցական կազմակերպության նախագահը (ներկայաթերթը կցվում է):

Միաձայն հաստատվեց օրակարգը:

1. ԼՍԵՑԻՆ – Ուսումնական գործընթացների ընթացքն ամբիոնում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – 1) Ա.Հարությունյան-Այս կիսամյակում ես դասավանդում եմ բակալավր 2-րդ, 3-րդ, 4-րդ կուրսերում կուրսերում և մագիստրատուրա 1-ին կուրսում: Բացակայություններ գրեթե չեն լինում: Որևէ խնդիր չկա:

2) Բ. Խոդերյան- Դասավանդում եմ բակալավր 3-րդ, 4-րդ կուրսերում և մագիստրատուրա 1-ին, 2-րդ կուրսերում: Դասերը ընթանում են նորմալ:

3) Ն.Օրդյան- Ես դասավանդում եմ բակալավր 3-րդ և մագիստրատուրայի 2-րդ կուրսում: Ինձ մոտ էլ ամեն ինչ նորմալ է: Հաճախումները նորմալ են:

4)Տ.Այվազյան-Ես դասավանդում եմ 3-րդ բակալավրիատում և 1-ին մագիստրատուրայում: Ինձ մոտ ամեն ինչ նորմալ է:

5) Ս.Վարդանյան-Ես դասավանդում եմ 2-րդ, 4-րդ բակալավրիատում և 1-ին մագիստրատուրայում: Ուսումնական գործընթացն իրականացվում է լիարժեք: Հաճախումները նորմալ են:

6)Ա.Սահրադյան-Այս կիսամյակում ես դասավանդում եմ բակալավրիատի 2-րդ և 4-րդ կուրսերում և մագիստրատուրայի 2-րդ կուրսում: Հաճախումները նորմալ են: Ինձ մոտ էլ ոչ մի խնդիր չկա:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ուսումնական գործընթացը համարել բավարար:

2. ԼՍԵՑԻՆ – Մանկավարժական պրակտիկայի ընթացքի մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-դոցենտ Բ.Խոդերյան- 2022–2023 ուս.տարվա 1–ին կիսամյակում մենք ունեցել ենք հետևյալ պրակտիկաները՝

1.Ուսումնական պրակտիկա հեռակա 4–րդ կուրսում, որը անց է կացվելու ԻՆՖՈԻՍ կազմակերպությունում պարոն Տ.Այվազյանի ղեկավարությամբ: Պրակտիկան սկսում է նոյեմբերի 28-ին և տևելու է երկու շաբաթ:

2.Մանկավարժական պրակտիկա հեռակա 5–րդ կուրսում պարոն Տ.Այվազյանի ղեկավարությամբ: Պրակտիկան անց է կացվել թիվ 194 դպրոցում: Պրակտիկայի պաշտպանությունը կայանալու է հունվարին առերես:

3.Մանկավարժական պրակտիկա առկա 4-րդ կուրսում պարոն Ա. Հարությունյանի ղեկավարությամբ: Պրակտիկան ընթանում է թիվ 194 դպրոցում: Պրակտիկայի պաշտպանությունը կայանալու է հունվարին:

4. Ուսումնաճանաչողական պրակտիկա առկա 3-րդ կուրսում պարոն Տ.Այվազյանի ղեկավարությամբ: Պրակտիկան ընթանում է ՀՊՄՀ թիվ 57 դպրոցում:

5. Մանկավարժահետազոտական պրակտիկա մագիստրատուրայի 2-րդ կուրսում ուսանողների մագիստրոսական թեզերի գիտական ղեկավարների գլխավորությամբ:

ՈՐՈՇԵՑԻՆ – Պրակտիկայի կատարման ընթացքը համարել բավարար:

3. ԼՍԵՑԻՆ - Միջանկյալ քննությունների առաջին փուլի արդյունքների ամփոփում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- դոցենտ Ս.Վարդանյան-Մեր ամբիոնում առաջին կրսամյակի առաջին միջանկյալ քննությունները անցել են նորմալ: Ուսանողները հանձնել են գրավոր աշխատանքները դրական գնահատականներով: Միայն Ավետիսյան Նարեկը չի ներկայացել «Այլընտրանքային էներգիայի աղբյուրներ» դասընթացի միջանկյալ ստուգմանը:

Երկրորդ միջանկյալ գրավորները կլինեն դեկտեմբերի 22-ից-28-ը ընկած ժամանակահատվածում:

ՈՐՈՇԵՑԻՆ- Միջանկյալ քննությունների առաջին փուլի արդյունքները համարել բավարար:

4. ԼՍԵՑԻՆ - 2-րդ միջանկյալ և ամփոփիչ ստուգումների քննատոմսերի հաստատում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Սահրադյան Ա.- Դեկտեմբերի 22-ից - 28-ը տեղի է ունենալու 1-3-րդ կուրսերի երկրորդ միջանկյալ ստուգումները: Դասախոսները ամբիոնի քննարկմանն են ներկայացրել երկրորդ միջանկյալ և ամփոփիչ ստուգման հարցատոմսերը: Առաջարկում եմ վերահաստատել այսօրվա ամսաթվով:

ՈՐՈՇԵՑԻՆ – Միջանկյալ և ամփոփիչ քննության տոմսերը վերահաստատել այսօրվա ամսաթվով՝ 25.11.2022թ.:

5. ԼՍԵՑԻՆ - Ընթացիկ հարցեր

5.1 ԼՍԵՑԻՆ - Ամբիոնի հայցորդ Գոհար Գրիգորյանի հաշվետվությունը 2022-2023ուս. տարվա 1-ին կիսամյակում կատարած աշխատանքների մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- պրոֆեսոր Ա.Ի.Սահրադյանը նշեց, որ Տեխնոլոգիական կրթության ամբիոնի հայցորդ Գոհար Գրիգորյանը ներկայացրել է հաշվետվություն 2022-2023 ուս. տարվա 1-ին կիսամյակի ընթացքում իր կատարած աշխատանքների վերաբերյալ /հաշվետվության կրկնօրինակը կցվում է/:

Գոհար Գրիգորյանն այս ուսումնական տարվա 1-ին կիսամյակում մասնակցել և հավաքել է համապատասխան կրեդիտներ «Ընդհանուր մանկավարժություն», «Բուհական մանկավարժություն», «Կրթության կառավարում», «Տեղեկատվական նոր տեխնոլոգիաներ», «Դասավանդման մեթոդիկա», «Կրթական նոր տեխնոլոգիաներ» և «Գիտական հետազոտությունների մեթոդաբանություն» առարկաներից:

Այժմ իրականացնում է գիտամեթոդական նյութերի ուսումնասիրություն և աշխատում է ստենախոսության թեմայի հիմնավորման վրա:

Արտահայտվեցին տեխ.գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա.Ի.Սահրադյանը, տեխ. գիտ. թեկնածու, դոցենտներ Բ.Ա. Խողերյանը, Ս.Ո. Վարդանյանը, Ն.Ա. Օրոյանը, ֆիզ.- մաթ. գիտ. թեկնածու, պրոֆ. պաշտ. Տ.Մ. Այվազյանը և դոցենտ Ա.Հ. Հարությունյանը, ովքեր նշեցին որ հայցորդը 2022-2023 ուսումնական տարում հավաքել է համապատասխան կրեդիտներ, ուսումնասիրել է գիտամեթոդական գրականությունը և աշխատում է իր ատենախոսության թեմայի հիմնավորման վրա: Առաջարկեցին ատեստավորել ամբիոնի հայցորդ Գոհար Գրիգորյանին:

Քննարկման արդյունքում

ՈՐՈՇԵՑԻՆ - Ատեստավորել Տեխնոլոգիական կրթության ամբիոնի հայցորդ Գոհար Գրիգորյանին:

5.2 ԼՄԵՑԻՆ - Տեխնոլոգիական կրթության ամբիոնի 2022թ.ամբիոնի տարեկան հաշվետվությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ--Հարգելի գործընկերներ Զեզ եմ ներկայացնում ամբիոնի 2022 ուս տարվա ընթացքում կատարված աշխատանքների հաշվետվությունը (հաշվետվությունը կցվում է):

Հաշվետու ուսումնական տարում «Տեխնոլոգիական կրթության» ամբիոնը սպասարկել է Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի «Տեխնոլոգիա և ձեռնարկչություն» մասնագիտության (առկա բակալավրիատ և մագիստրատուրա, հեռակա բակալավրիատ) թվով 89 ուսանողների ուսուցման գործընթացը:

2022 ուս.տարվա «Տեխնոլոգիա և ձեռնարկչություն» մասնագիտության ուսանողների թիվն ըստ կուրսերի

Առկա բակալավրիատ		Առկա մագիստրատուրա		Հեռակա բակալավրիատ	
կուրսը	ուսանողների թիվը	կուրսը	ուսանողների թիվը	կուրսը	ուսանողների թիվը
1-ին	-	1-ին	4	1-ին	2
2-րդ	12	2-րդ	3	2-րդ	17
3-րդ	3			3-րդ	15
4-րդ	3			4-րդ	10
				5-րդ	20
Ընդամենը	18		7		64
Ընդամենը	89				

Ամբիոնն առաջնորդվել է նախապես կազմված և հաստատված ուսումնական պլաններով:

2022 ուս. տարում ամբիոնն ունեցել է 14 ամբիոնի նիստ, որտեղ քննարկվել են ուսումնական գործընթացին վերաբերվող հարցեր:

1. Ուսումնական գործընթացներն ամբիոնում կազմակերպվել են գոյություն ունեցող նորմատիվային պահանջներին համապատասխան:

ա) ուսումնական տարին սկսվել է քննարկված և հաստատված դասաբաշխումով ու դասատախտակով:

2022-2023 ուսումնական տարում ամբիոնի ընդհանուր ծանրաբեռնվածությունը կազմել է 4418 ժամ՝ 5,0 հաստիք, որը բաշխվել է ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմի միջև հետևյալ կերպ.

- տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր- 1,0 հաստիք,
- ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների թեկնածու, պրոֆեսորի պաշտոնակատար - 0.75 հաստիք,
- տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ- 2,25 հաստիք,
- դոցենտ - 1,0 հաստիք:

բ) Ամբիոնի չորս ուսումնական լաբորատորիաները և երկու արհեստանոցները նախատեսված են ուսումնական դասընթացների գործնական - պրակտիկ սպասարկման համար:

գ) Ամբիոնում դասավանդվող բոլոր առարկաները ներառված են եղել գործող ուսումնական պլաններում:

դ) Երկու քննաշրջաններն էլ (ձմեռային, ամառային) կազմակերպվել և անցկացվել են դեկանատի կողմից կազմված ժամանակացույցերին համապատասխան:

ե) Ուսուցումը կազմակերպվել է ըստ առարկայական ծրագրերի, իսկ արդյունքները ստուգվել են ընթացիկ ու ամփոփիչ քննություններով՝ կրեդիտային և գործող գնահատման համակարգերին համապատասխան:

զ) Պետական ավարտական որակավորման քննություններից առաջ ամբիոնի բոլոր առարկաների գծով կազմակերպվել են խորհրդատվություններ:

է) Ամբիոնի դասախոսական անձնակազմի ղեկավարությամբ «Տեխնոլոգիա և ձեռնարկչություն» մասնագիտության ուսանողների համար իրականացվել են ուս. պլաններով նախատեսված մանկավարժական և ուսումնական պրակտիկաներ:

*2021 ուս.տարվա «Տեխնոլոգիա և ձեռնարկչություն»
մասնագիտության ուսանողների պրակտիկաները*

Պրակտիկայի տեսակը	Կուրսը	Կիսամյակը	Պրակտիկայի տևողությունը
Մանկավարժական պրակտիկա (շարունակական)	ԱԲ3	1-ին	Շաբաթական 1 օր
Մանկավարժական պրակտիկա	ՀԲ3	2-րդ	4 շաբաթ
Մանկավարժական պրակտիկա	ՀԲ4	1-ին	2շաբաթ

Մանկավարժական պրակտիկա	ՀԲ5	1-ին	4շաբաթ
Մանկավարժա-հետազոտական պրակտիկա	ԱՄ1	2-րդ	3շաբաթ
Մանկավարժա-հետազոտական պրակտիկա	ԱՄ2	1-ին	3շաբաթ
Ուսումնական պրակտիկա	ՀԲ4	2-րդ	2շաբաթ
Մանկավարժական պրակտիկա (շարունակական)	ԱԲ2	2-րդ	Շաբաթական 1 օր
Մանկավարժական պրակտիկա	ՀԲ5	2-րդ	4շաբաթ

Ամբիոնը լուրջ ուշադրություն է դարձնում պրակտիկաների կազմակերպմանը, ընթացքին և ավարտական հաշվետվությունների քննարկմանն ու որակին:

2. Գիտամեթոդական և գիտամանկավարժական աշխատանքների գծով.

ա) Ամբիոնի կազմակերպած սեմինարները, տպագրած հոդվածները, ուսումնամեթոդական ձեռնարկները և դասագրքերը նպաստում են ամբիոնի գիտական զարգացմանը: Ամբիոնի դասախոսները համատեղ գիտահետազոտական աշխատանք են կատարում մագիստրատուրայի ուսանողների հետ:

Ամբիոնն ունի 3 հայցորդ, ովքեր իրենց ղեկավարի հետ համատեղ իրականացրել են հետազոտական աշխատանք և հաշվետվության տեսքով ներկայացրել ամբիոնի գիտական սեմինարի ժամանակ:

Ամբիոնում կազմակերպվել է գիտական սեմինար՝

- Գիտաժողով «Տեխնոլոգիա» առարկայի դրվածքը դպրոցում և ապագայի տեսլականը:
- «Ժողովրդական գեղարվեստական արհեստները մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետում» խորագրով ցուցահանդես:
- Հոբելյանական հանդիպում «Տեխնոլոգիա և ձեռնարկչություն» մասնագիտության շրջանավարտների և ուսուցիչների հետ:
- առկա ուսուցման 4-րդ կուրսի և հեռակա ուսուցման 5-րդ կուրսի ուսանողների ավարտական աշխատանքների կատարման մասին զեկուցում,
- 1-ին և 2-րդ կուրսերի մագիստրանտների մագիստրոսական թեզերի զեկուցում,
- ամբիոնի դասախոսների գիտական զեկուցումներ,
- ամբիոնի հայցորդների գիտական զեկուցումներ,
- ամբիոնի հայցորդների ատեստավորում:

բ) 2022թ. ամբիոնի աշխատակիցների կողմից գիտական ժողովածուներում հրատարակվել են 3 գիտական հոդված:

գ) Ամբիոնի նիստերում պարբերաբար քննարկվել է ամբիոնի գծով դասվանդվող առանձին առարկաների դրվածքը:

դ) Ամբիոնը համագործակցում է.

- ՀՀ ԳԱԱ Ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտի(ՖԿՊԻ) «Նյութագիտության» լաբորատորիայի հետ,
- ՀՊՃՀ -ի «Մետալուրգիայի և նյութագիտության» գիտական լաբորատորիայի հետ,
- Տեղեկատվական տեխնոլոգիաների Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության (ԱՏՁՄ) հետ,
- «ԻՆՖՈՒՍ» ֆորմալ և ոչ ֆորմալ կրթության աջակցող հասարակական կազմակերպության հետ,
- Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի հետ (Գիտական Խորհրդի և Ճգնաժամային կառավարում և տեխնոլոգիաներ գիտական և գիտամեթոդական ժողովածուի խմբագրական խորհրդի անդամ (Ա.Սահրադյան),
- ՀԱՊՀ ԲԱՄԲԵԴ հանդեսի «Մետալուրգիա, նյութագիտություն, ընդերքօգտագործում» սերիայի խմբագրական խորհրդի անդամ (Ա.Սահրադյան),
- Национальный технический университет Украины «Киевский политехнический институт имени Игоря Сикорского»(А.И.Саградян в составе редакционной коллегии научного журнала Приборостроение),
- Украина, Журнал научных трудов <<Социальное развитие и безопасность>>(А.И.Саградян в составе редакционной коллегии),
- Journal “Ukrainian Journal of Mechanical Engineering and Materials Science” (A.I.Sagradian in the editorial board),
- Ukrainian Journal of Scientific Papers “Social development and Security”(A.I.Sagradian in the editorial board:3. Ուսումնադաստիարակչական աշխատանքների գծով.

ա) Ամբիոնի նիստերում պարբերաբար քննարկվել է ուսանողների հաճախումների հարցը, կազմակերպվել ուսումնամեթոդական միջոցառումներ, հանդիպումներ և քննարկումներ:

բ) Ամբիոնն իր ակտիվ մասնակցությունն է ցուցաբերել ֆակուլտետի և համալսարանի արտաուսումնական կյանքին:

4. Դասախոսների վերապատրաստման աշխատանքների գծով.

Ամբիոնի ՊԴԱ-ի որակավորման բարձրացման և վերապատրաստման տարեկան գրաֆիկ			
Դասախոս Ա.Ա.Հ./հաստիք	ՈԲ-ի անցկացման հաստատություն և	ՈԲ ժամկետները	Արդյունք

Դոցենտ Ն.Ա.Օրոյան	ՀՊՄՀ	փետրվարի 2-ից մարտի 23-ը	International English language training course (60 hours/ 2 ECTS/corresponding to mixed – skill-based assessment level A2/B1)
Դոցենտ Ս.Ո.Վարդանյան Դոցենտ Ն.Ա.Օրոյան	ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ	մարտի 30-ից ապրիլի 1-ը	«Responsible conduct of research: STEM scientist and peaceful life», in the framework of the EU-funded targeted initiative Export Control on Dual-Use Materials and Intangible Technologies in the Caucasus and Central Asia.
Դոցենտ Ս.Ո.Վարդանյան	DVV International in Armenia	հուլիսի 7-ից հոկտեմբերի 11-ը	«Մեծահասակների ուսումնառության և կրթության հիմունքներ. դասավանդման մեթոդաբանություն» 12-շաբաթյա համակացված դասընթաց՝ հիմնված ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից երաշխավորված Curriculum GlobALE չափորոշիչի վրա:
Դոցենտ Ս.Ո.Վարդանյան Մասնագետ Ա.Ս.Հակոբյան	DVV International in Armenia	հոկտեմբերի 26-ից նոյեմբերի 16-ը	<<Մեդիագրագիտություն>> վերապատրաստման դասընթաց

ՈՐՈՇԵՑԻՆ- Ամբիոնում կատարված աշխատանքները համարել բավարար:

5.3 ԼՍԵՑԻՆ -ՀՊՄՀ-ի և ՀՊՄՀ Արհեստակցական կազմակերպության միջև կնքվելիք Կոլեկտիվ պայմանագրի նախագիծը:


ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- 1)Ա.Սահրադյան- ՀՊՄՀ Արհեստակցական կազմակերպության նախագահ պարոն Է.Գուլյանը կներկայացնի ՀՊՄՀ-ի և ՀՊՄՀ Արհեստակցական կազմակերպության միջև կնքվելիք Կոլեկտիվ պայմանագրի նախագիծը:

2) Է.Գուլյան – Հարգելի ընկերնոր, թույլ տվեք ներկայացնել «Կոլեկտիվ պայմանագրի նախագիծը», որը մշակվել և առաջարկվել է Արհեստակցական կազմակերպության կողմից, որն ուղղված է աշխատակազմի շահերի պաշտպանությանը:

Կոլեկտիվ պայմանագրի նախագծում առավելապես շեշտը դրված է աշխատողների շահերի և իրավունքների բարենպաստ պայմանների ստեղծմանը: Մասնավորապես պրոֆեսորադասիտոսական անձնակազմի ծանրաբեռնվածության շեմի նվազեցումը, ամուսնության, ընտանիքի անդամների հետ դժբախտ պատահարի դեպքում վճարովի արձակուրդի հատկացումը, հղիի և մինչև 3 տաեկան երեխա ունեցող աշխատողի համար

սահմանել ոչ լրիվ աշխատաժամանակ և մի շարք այլ դրույթներ (Կոլեկտիվ պայմանագրի նախագիծը կցում է):

ՈՐՈՇԵՑԻՆ- Ամբիոնը դրական է գնահատում նախագծի դրույթները և կողմ է, որպեսզի այն հաստատվի:



Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ի Ն Կ

2022թ. նոյեմբերի 29-ի տեղի ունեցած Տեխնոլոգիական

կրթության ամբիոնի նիստի

Օրակարգում՝

1. Մ.թ. դեկտեմբերի 1-ից դեկտեմբերի 27-ը այցելություններ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի ավագ դպրոցներ՝ իրազեկելով և կողմնորոշելով բարձր դասարանի աշակերտներին 2023-2024 ուսումնական տարվա ընդունելության ծրագրերին:
2. Ընթացիկ հարցեր

Նիստին ներկա էին ամբիոնի դասախոսները և աշխատակիցները (ներկայաթերթը կցվում է):

Միաձայն հաստատվեց օրակարգը:

1. ԼՍԵՑԻՆ – Ուսումնական գործընթացների ընթացքն ամբիոնում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – 1) Ա.Սահրադյան- Ստացել ենք գրություն նախապատրաստական բաժնից, ըստ որրի պետք է ներկայացնենք ՀՀ մարզեր և Երևան

քաղաքի ավագ դպրոցներ այցելությունների գրաֆիկ ս.թ. դեկտեմբերի 1-ից մինչև դեկտեմբերի 27-ը՝ բարձր դասարանի աշակերտներին իրազեկելու և կողմնորոշելու և 2023-2024 ուսումնական տարվա ընդունելությունը պատշաճ կազմակերպելու նպատակով:

Ամբիոնի դասախոսները ամբիոնի քննարկմանը և հաստատմանն են ներկայացրել ՀՀ մարզեր և Երևան քաղաքի ավագ դպրոցներ այցելությունների գրաֆիկը:

N°	Հաստատության անվանումը	Հասցեն	Դասախոս	Այցելության ժամկետը
1.	ՀԱՊՀ ավագ դպրոց	Երևան, Տերյան փող., 105 շենք, 7-րդ մասնաշենք	Վարդանյան Ս.Ո. Խողերյան Բ.Ա.	01.12.2022թ.
2.	Վաղարշապատի Մաքսիմ Գորկու անվան թիվ 5 ավագ դպրոց	Արմավիրի մարզ, Էջմիածին Շահումյան փող., 100 շենք	Սահրադյան Ա.Ի. Խողերյան Բ.Ա. Օրդյան Ն.Ա.	06.12.2022թ.
3.	Երևանի թեթև արդյունաբերության քոլեջ	Երևան Գլինկայի փող., 2 շենք	Այվազյան Ս.Ս. Հարությունյան Ա. Հ.	01.12.22-27.12.22
4.	Երևանի Ա. Իսահակյանի անվան N 16 ավագ դպրոց	Երևան Նոր Արեշ, 9-րդ փողոց, 53 շենք	Այվազյան Ս.Ս. Հարությունյան Ա. Հ.	01.12.22-27.12.22
5.	Երևանի N 1 տարածաշրջանային պետական քոլեջ	Երևան, Թբիլիսյան խճ. 3/1	Սահրադյան Ա.Ի., Խողերյան Բ.Ա.	01.12.22-27.12.22
6.	Արմավիրի ինդուստրիալ-մանկավարժական քոլեջ	Արմավիրի մարզ, ք.Արմավիր, Աբովյան 107	Այվազյան Ս.Ս. Հարությունյան Ա.	01.12.22-27.12.22
7.	Երևանի հ.4 արհեստագործակա ն ուսումնարան	Երևան, Նոր Նորքի 4-րդ զանգված, Գյուլիքևիլյան փող., 20 շենք	Սահրադյան Ա. Խողերյան Բ.	01.12.22-27.12.22

Քննարկման արդյունքում

ՈՐՈՇԵՑԻՆ-

1. Հաստատել ՀՀ մարզեր և Երևան քաղաքի ավագ դպրոցներ այցելությունների գրաֆիկը:
2. Ներկայացնել Մաթեմատիկայի ֆիզիկայի և իրնֆորմատիկայի ֆակուլտետին:

Նիստի նախագահ՝		Ա.Բ. Սահրադյան
Քարտուղար՝		Ս.Ո. Վարդանյան

2022թ. դեկտեմբերի 28-ի տեղի ունեցած Տեխնոլոգիական

կրթության ամբիոնի նիստի

Օրակարգում՝

1. Ուսումնական գործընթացների ընթացքն ամբիոնում:
2. Ուսումնական ծրագրերի կատարման վիճակը:
3. Հեռակա ուսուցման առարկայական նկարագրերի և թեմատիկ տրոհումների քննարկում և հաստատում: Ձեկուցող՝ դասախոսներ
4. Լաբորատոր աշխատանքների կատարման վիճակը: Ձեկուցող՝ դասախոսներ, լաբորատորիայի պատասխանատուներ
5. Պրակտիկայի արդյունքների քննարկում: Ձեկուցող՝ դոցենտ Բ. Խողերյան
6. 2-րդ կուրսի մագիստրոսների թեզերի ատեստավորման մասին: Ձեկուցող՝ պրոֆեսոր Տ. Այվազյան, դոցենտներ Բ. Խողերյան, Ա. Հարությունյան
7. Ընթացիկ հարցեր:

Նիստին ներկա էին ամբիոնի դասախոսները և աշխատակիցները (ներկայաթերթը կցվում է):

Միաձայն հաստատվեց օրակարգը:

1. ԼՍԵՑԻՆ – Ուսումնական գործընթացների ընթացքն ամբիոնում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – 1. 1) Ն.Օրդյան- Ես դասավանդում եմ բակալավր 3-րդ և մագիստրատուրայի 2-րդ կուրսում: Դասընթացներն արդեն ավարտին են հասել: Գրել ենք նաև երկրորդ միջանկյալ գրավորները: Բացակայություններ գրեթե չեն եղել: Ինձ մոտ էլ ամեն ինչ նորմալ է:

2) Բ. Խողերյան- Դասավանդում եմ բակալավր 3-րդ, 4-րդ կուրսերում և մագիստրատուրա 1-ին, 2-րդ կուրսերում: Միայն 1-ին մագիստրոսների հետ դեռևս չենք

գրել երկրորդ միջանկյալ գրավորը: Դասընթացի հիմնական մասը ավարտել ենք: Մնացել է ամփոփիչ քննությունները:

3) Ա.Հարությունյան-Այս կիսամյակում ես դասավանդել եմ բակալավր 2-րդ, 3-րդ, 4-րդ կուրսերում կուրսերում և մագիստրատուրա 1-ին կուրսում: Բացակայություններ գրեթե չեն եղել: Ավարտվել են նաև երկրորդ միջանկյալ գրավորները: Որևէ խնդիր չկա:

4) Տ.Այվազյան-Ես դասավանդում եմ 3-րդ բակալավրիատում և 1-ին մագիստրատուրայում: Դասընթացներն արդեն ավարտվել են, գրել ենք երկրորդ միջանկյալ գրավորները: Ինձ մոտ ամեն ինչ նորմալ է:

5) Ս.Վարդանյան-Ես դասավանդում եմ 2-րդ, 4-րդ բակալավրիատում և 1-ին մագիստրատուրայում: Ուսումնական գործընթացն իրականացվել է լիարժեք: Դասերն ու միջանկյալները բոլոր կուրսերում ավարտել ենք: Հունվարին կլինի ամփոփիչ քննությունները:

6) Ա.Սահրադյան-Այս կիսամյակում ես դասավանդում եմ բակալավրիատի 2-րդ և 4-րդ կուրսերում և մագիստրատուրայի 2-րդ կուրսում: 2-րդ և 4-րդ կուրսերի հետ ավարտել ենք ուսումնական գործընթացը, մնացել են ամփոփիչ քննությունները: Այսօր առցանց տեղի է ունենալու մագիստրատուրա երկրորդ կուրսի երկրորդ միջանկյալ գրավորը: Ինձ մոտ էլ ոչ մի խնդիր չկա:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ուսումնական գործընթացը համարել բավարար:

2. ԼՍԵՑԻՆ – Ուսումնական ծրագրերի կատարման վիճակը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Ս.Վարդանյան-Ամբիոնում դասընթացներն ընթացել են նորմալ հունով և ըստ ուսումնական ծրագրերի:

2022-2023 ուս. տարվա առկա ուսուցման ուսումնական ծրագիրը իրականացվել է լիարժեք: Բացթողումներ չունենք: Հունվարի 9-ից սկսվելու է առկա ուսուցման ամփոփիչ քննությունները:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ուսումնական ծրագրերի կատարման վիճակը համարել բավարար:

3. ԼՍԵՑԻՆ -Լաբորատոր աշխատանքների կատարման վիճակը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – 1/ Գ.Տաբիրյան-Արիեստանցում լաբորատոր փորձերի ընթացքը նորմալ է: Ուսանողներն ակտիվ մասնակցել են լաբորատոր աշխատանքներին:

2/ Կ.Զաքարյան-407 լաբորատորիայում դասախոսություններն ու լաբորատոր աշխատանքներն իրականացվել են նորմալ: Առաջացել է փոքր տեխնիկական խնդիր «Հիդրավլիկա» առարկայի փորձի հետ կապված, որը կարճ ժամանակում լուծվել է:

3/ Հ.Հովհաննիսյան- Այս կիսամյակում 404 լաբորատորիայում իրականացվել է հագուստի մոդելավորման լաբորատոր դասերը և էլեկտրատեխնիկայի գործնական դասերը: Լաբորատոր ժամերը իրականացվել են նորմալ:

ՈՐՈՇԵՑԻՆ-Լաբորատորիաների վիճակը և դասապրոցեսի ընթացքը համարել նորմալ:

4. ԼՍԵՑԻՆ- Պրակտիկայի արդյունքների քննարկում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Բ.Խողերյան-2022–2023 ուս.տարվա 1–ին կիսամյակում մենք ունեցել ենք հետևյալ պրակտիկաները.

1.Ուսումնական պրակտիկա հեռակա 4–րդ կուրսում, որը անց է կացվել ԻՆՖՈԻՍ կազմակերպությունում պարոն Տ.Այվազյանի ղեկավարությամբ:

2.Մանկավարժական պրակտիկա հեռակա 5–րդ կուրսում պարոն Ա.Սահրադյանի և Տ.Այվազյանի ղեկավարությամբ: Պրակտիկան անց է կացվել թիվ 194 դպրոցում: Պրակտիկայի պաշտպանությունը կայանալու է հունվարի 27–ին:

3.Մանկավարժական պրակտիկա առկա 4–րդ կուրսում պարոն Ա.Հարությունյանի ղեկավարությամբ: Պրակտիկան ընթանում է թիվ 194 դպրոցում: Պրակտիկայի պաշտպանությունը կայանալու է հունվարի 20–ին:

4. Ուսումնաճանաչողական պրակտիկա առկա 3–րդ կուրսում պարոն Տ.Այվազյանի ղեկավարությամբ: Պրակտիկան ընթացել է ՀՊՄՀ թիվ 57 դպրոցում: Պաշտպանությունը տեղի է ունենալու հունվարի 20–ին:

5. Մանկավարժահետազոտական պրակտիկա մագիստրատուրայի 2-րդ կուրսում ուսանողների մագիստրոսական թեզերի գիտական ղեկավարների գլխավորությամբ: Մագիստրոսների գնահատումը լինելու է ղեկտեմբերի 29-ին:

ՈՐՈՇԵՑԻՆ- Պրակտիկայի ընթացքը համարել բավարար:

5. ԼՍԵՑԻՆ - 2-րդ կուրսի մագիստրոսական թեզերի կատարման ընթացքը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-1/Բ.Խողերյան-Ինձ մոտ ավարտական թեզի աշխատանք է կատարում Պետրոսյան Համլետը: Մագիստրոսական աշխատանքի թեման է «Սովորողների տեխնիկական ստեղծագործական ունակությունների զարգացումը կրթական ռոբոտատեխնիկայի միջոցով»: Գիտափորձն իրականացնելու է հայտնի Բեննետի թեստի օգնությամբ: Աշխատանքի մոտավորապես 90%-ը կատարված է:

2/Ա.Հարությունյան-Ես ղեկավարում եմ Կարինե Սարգսյանի մագիստրոսական աշխատանքը: Աշխատանքի թեման է « «Փայտամշակման տեխնոլոգիա» բաժնի դասավանդման առանձնահատկությունները միջին դպրոցում»: Մագիստրոսը աշխատում է իր հետազոտական աշխատանքի վրա: Կան որոշակի թերություններ, սակայն վստահ եմ, որ մագիստրոսը կհասցնի լիարժեք ավարտել աշխատանքը:

4/Տ.Այվազյան-Ես ղեկավարում եմ Գրիգորյան Միլենայի թեզը: Թեզի թեման է ««Էլեկտրական եներգիայի ստացումը վերականգնվող էներգիայի աղբյուրների օգտագործմամբ» թեմայի դասավանդման մեթոդիկական միջին մասնագիտական հաստատություններում»: Աշխատանքի երկու գլուխն ավարտված է: Ամեն ինչ նորմալ է, վստահ եմ կհասցնի ավարտել աշխատանքը:

ՈՐՈՇԵՑԻՆ- 2-րդ կուրսի մագիստրոսական թեզերի կատարման ընթացքը համարել լավ:

Նիստի նախագահ՝		Ա.Բ. Սահրադյան
Քարտուղար՝		Ս.Ո. Վարդանյան

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն հ. 7

2023թ. հունվարի 31-ին կայացած Տեխնոլոգիական

կրթության ամբիոնի նիստի

Օրակարգում՝

1. Հեռակա ուսուցման ուսումնական գործընթացների վիճակը:
2. 2022-2023 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի առարկայական ուսումնամեթոդական փաթեթների տեղադրումը էլեկտրոնային հարթակում մինչև 08.02.2023թ.:
3. 2-րդ կիսամյակի նախապատրաստական աշխատանքների մասին:
4. Հեռակա ուսուցման բաժնի 5-րդ կուրսի դիպլոմային աշխատանքների կատարման ընթացքի մասին:

Ձեկուցող՝ դոցենտ Ս. Վարդանյան

5. 2-րդ կիսամյակի դասալսումների գրաֆիկի հաստատումը:
6. Ընթացիկ հարցեր:

Նիստին ներկա էին ամբիոնի 9 անդամ (ներկայաթերթը կցվում է):

Միաձայն հաստատվեց օրակարգը:

1. ԼՍԵՑԻՆ – Հեռակա ուսուցման ուսումնական գործընթացների վիճակը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-1/Ս.Վարդանյան-Այս կիսամյակում ես դասավանդում եմ հեռակա 1-ին, 2-րդ և 3-րդ կուրսերում: Դասերը ընթացել են նորմալ, բացականք եղել են, բայց ոչ պարբերաբար:

2/Բ.Խողերյան-Ես դասավանդում եմ 4-րդ և 5-րդ կուրսերում: Դասընթացների ավարտին մնացել է 2 օր: Դասապրոցեսը նորմալ է, բոլորն էլ մասնակցում են դասապրոցեսին: Բացակայությունները հիմնականում չեն եղել:

3/ Ա.Հարությունյան-Ես դասավանդում եմ 1-ին, 2-րդ և 3-րդ կուրսերում: Ինձ մոտ էլ նույն իրավիճակն է ինչ որ մյուս դասախոսների մոտ:

4/ Ն.Օրդյան- Ես դասավանդում եմ միայն 5-րդ կուրսում: Բացակա ուսանողներ համարյա թե չունենք: Դասերն ընթանում են նորմալ:

5/Տ.Այվազյան-Այս կիսամյակում ես դասավանդում եմ միայն հեռակա 4-րդ կուրսում: Դասերն ինձ մոտ էլ նորմալ են ընթացել: Բացակայություններ եղել են, բայց քիչ:

6/Ա.Սահրադյան-Այս կիսամյակում ես դասավանդում եմ 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ կուրսերում: Ինձ մոտ նույնպես դասապրոցեսները նորմալ են: Բացակայող ուսանողներ գրեթե չկան:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հեռակա ուսուցման ուսումնական գործընթացների վիճակը համարել բավարար:

2. ԼՍԵՑԻՆ- 2022-2023 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի առարկայական ուսումնամեթոդական փաթեթների տեղադրումը էլեկտրոնային հարթակում մինչև 08.02.2023թ.:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Ա.Սահրադյան- Կրթության էլեկտրոնային կառավարման բաժնի կողմից ստացել ենք գրություն, ըստ որի պետք իրականացնել առկա ուսուցման երկրորդ կիսամյակում դասավանդվող դասընթացների ստեղծում և դասընթացներում ուսումնամեթոդական փաթեթների տեղադրում մինչև ս.թ. փետրվարի 8-ը:

Փաթեթներն արդեն կազմված են և հաստատված ամբիոնի 29.08.2022թ.-ի թիվ 1 նիստով:

ՈՐՈՇԵՑԻՆ –2022-2023 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի առարկայական ուսումնամեթոդական փաթեթները տեղադրել էլեկտրոնային հարթակում մինչև 08.02.2023թ.:

3. ԼՍԵՑԻՆ- 2-րդ կիսամյակի նախապատրաստական աշխատանքների մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Սահրադյան Ա.-Հարգելի դասախոսներ երկրորդ կիսամյակի դասերը սկսվելու են փետրվարի 9-ից՝ առերես, միայն մագիստրատուրա 2-րդ կուրսերի մոտ որոշ դասընթացներ կընթանան առցանց: Դասացուցակները

պատրաստ են և տեղադրված են համալսարանի կայքում: Ուսանողները տեղեկացված են:

Լաբորատորիաներում լաբորատոր սարքերը կարգաբերվել են: Միայն «Ձեռագործություն» դասընթացի համար նյութատեխնիկական մատակարարման բաժնից դեռևս չենք ստացել համապատասխան նյութեր և հարմարանքներ:

ՈՐՈՇԵՑԻՆ-2-րդ կիսամյակի նախապատրաստական աշխատանքները համարել բավարար:

4. ԼՍԵՑԻՆ- Հեռակա ուսուցման բաժնի 5-րդ կուրսի դիպլոմային աշխատանքների կատարման ընթացքի մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Վարդանյան Ս.- Հեռակա 5-րդ կուրսի ուսանողներին արդեն իսկ բաժանվել են դիպլոմային աշխատանքների թեմաները, տրվել են հանձնարարություններ: Քանի որ ուսանողները քննաշրջանի մեջ են, ապա կատարած աշխատանքների վերաբերյալ քննարկումներ կիրականացվեն փետրվար ամսին:

Առաջարկում եմ կազմել խորհրդատվության գրաֆիկ, ըստ որի ուսանողները շաբաթական մեկ անգամ կարող են հանդիպել դասախոսներին և մասնակցել խորհրդատվություններին:

ՈՐՈՇԵՑԻՆ –1.Հեռակա 5-րդ կուրսի դիպլոմային աշխատանքների կատարման վիճակը համարել բավարար:

2. Կազմել խորհրդատվության գրաֆիկ (կցվում է):

5. ԼՍԵՑԻՆ-2-րդ կիսամյակի դասալսումների գրաֆիկի հաստատումը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Ա.Սահրադյան-Այս կրսամյակում դասալսումներ կլինեն յուրաքանչյուր դասախոսի մոտ մեկ անգամ հետևյալ գրաֆիկով.

հհ	Դասախոսի անուն, ազգանուն	Առարկա	Դասալսման օր
1	Խողերյան Բորիս	Տեխնիկական ստեղծագործություն և արդյունաբերական դիզայն	21.02.2023 (12:50-14:10)

2	Այվազյան Տիգրան	Հիդրավլիկայի և ջերմատ. հիմունքներ	13.03.2023 (11:00-12:20)
3	Հարությունյան Աշոտ	Ժողովրդական գեղարվեստական արհեստներ	16.03.2023 (12:50-14:10)
4	Օրդյան Նունե	Տեխնոլոգիական գործընթացների ավտոմատացում և ռոբոտոտեխնիկա	04.04.2023 (09:30-10:50)
5	Վարդանյան Սոնյա	Գծագրություն	28.04.2023 (12:50-14:10)

ՈՐՈՇԵՑԻՆ- Դասալսումների գրաֆիկը հաստատել և ընդունել ի գիտություն:

Նիստի նախագահ՝ *Ս. Սահրադյան* Ա.Բ. Սահրադյան
Քարտուղար՝ *Ս.Ո. Վարդանյան* Ս.Ո. Վարդանյան

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն հ. 8

2023թ. փետրվարի 21-ին կայացած Տեխնոլոգիական

կրթության ամբիոնի նիստի

Օրակարգում՝

1. Ուսումնական գործընթացների ընթացքն ամբիոնում:

Ձեկ. դասախոսներ

2. Միջանկյալ քննությունների նախապատրաստում, տոմսերի վերահաստատում:

Ձեկ. դոցենտ Ն.Օրդյան

3. Մանկավարժական պրակտիկայի կազմակերպման մասին:

Ձեկ. դոցենտ Բ.Խողերյան

4. «Կիրառական մեխանիկա» առարկայի կուրսային նախագծերի թեմաների հաստատումը և առաջադրանքների բաշխումը:

Ձեկ. դոցենտ Ս.Վարդանյան

5. Ընթացիկ հարցեր:

5.1 Տեխնոլոգիա և ձեռնարկչություն մասնագիտության մանկավարժահոգեբանական և ուսումնամեթոդական հմտություններ ապահովող մոդուլներով իրականացվող 30 կրեդիտի միջոցով մանկավարժի հավաստագրման կրթական ծրագրի մասնակիցների հետազոտական աշխատանքների թեմաների քննարկում և հաստատում:

5.2 Google Classroom էլեկտրոնային հարթակում ընթացիկ ստուգման բաղադրիչի գնահատման մասին:

Նիստին ներկա էին ամբիոնի 10 անդամ (ներկայաթերթը կցվում է):

Միաձայն հաստատվեց օրակարգը:

1. ԼՍԵՑԻՆ – Ուսումնական գործընթացների ընթացքն ամբիոնում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-1) Ս.Վարդանյան-Ես դասավանդում եմ 2-րդ, 3-րդ, 4-րդ բակալավրիատում և 1-ին և 2-րդ մագիստրատուրայում: Հաճախումները նորմալ են, դասապրոցեսը՝ նույնպես:

2) Բ. Խողերյան-Ես դասավանդում եմ բակալավր 3-րդ, 4-րդ կուրսերում և մագիստրատուրա 1-ին, 2-րդ կուրսերում: Դասերը ընթանում են նորմալ: Բացակայություններ գրեթե չկան:

3) Ն.Օրդյան- Ես դասավանդում եմ բակալավր 4-րդ կուրսում: Ինձ մոտ էլ ամեն ինչ նորմալ է:

4) Ա.Հարությունյան-Այս կիսամյակում ես դասավանդում եմ բակալավր 3-րդ և 4-րդ կուրսերում և մագիստրատուրա 1-ին կուրսում: Բացակայություններ գրեթե չեն լինում: Դասերն ընթանում են իրենց բնականոն հունով:

5)Տ.Այվազյան-Ես դասավանդում եմ 3-րդ, 4-րդ բակալավրիատում և 1-ին և 2-րդ մագիստրատուրայում: Ամեն ինչ նորմալ է:

6)Ա.Սահրադյան-Այս կիսամյակում ես դասավանդում եմ բակալավրիատի 3-րդ կուրսում և 1-ին կուրսում: Ինձ մոտ էլ ոչ մի խնդիր չկա:

Քննարկման արդյունքում

ՈՐՈՇԵՑԻՆ –Ուսումնական գործընթացների վիճակը համարել բավարար:

2. ԼՍԵՑԻՆ- Միջանկյալ ստուգումների նախապատրաստում, տոմսերի վերահաստատում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Օրդյան Ն.-Այս կիսամյակում 4-րդ կուրսի առաջին միջանկյալ ստուգումները կսկսվեն 09.03.2023թ-ից, իսկ 3-րդ կուրսերի մոտ `16.03.2023թ.-ից: Ուստի առաջարկում եմ այս կիսամյակի առաջին միջանկյալ ստուգման տոմսերը վերահաստատել այսօրվա ամսաթվով` 21.02.2023թ.:

Քննարկման արդյունքում

ՈՐՈՇԵՑԻՆ-2-րդ կիսամյակի առաջին միջանկյալ ստուգման տոմսերը վերահաստատել 21.02.2023թ.-ով:

3. ԼՍԵՑԻՆ- Մանկավարժական պրակտիկայի կազմակերպման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Խողերյան Բ.-Այս կիսամյակում ուսումնաճանաչողական պրակտիկա են անցնում բակալավր 2-րդ կուրսի ուսանողները Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի թիվ 57 դպրոցում՝ դոցենտ Ա.Հարությունյանի ղեկավարությամբ:

Հեռակա ուսուցման 3-րդ կուրսի ուսանողները իրենց չորս շաբաթյա՝ փետրվարի 27-ից մարտի 27-ը, ակտիվ մանկավարժական պրակտիկան են անցնելու Երևանի Արմեն Հովհաննիսյանի անվան 194 հիմնական դպրոցում՝ տեխ.գիտ.դոկտոր, պրոֆեսոր Ա.Ի.Սահրադյանի և դոցենտ Ա.Հ.Հարությունյանի ղեկավարությամբ:

Քննարկման արդյունքում

ՈՐՈՇԵՑԻՆ- Մանկավարժական պրակտիկայի կազմակերպման մասին տեղեկատվությունն ընդունել ի գիտություն:

4. ԼՍԵՑԻՆ- «Կիրառական մեխանիկա» առարկայի կուրսային նախագծերի թեմաների հաստատումը և առաջադրանքների բաշխումը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ս.Վարդանյան-Այս կիսամյակում «Կիրառական մեխանիկա» առարկայից կուրսային աշխատանք են կատարելու 3-րդ կուրսի ուսանողները: Քանի որ ունենք 3 ուսանող, ուստի թեմաները կհանձնարարենք ըստ մատյանի հերթական համարների:

Քննարկման արդյունքում

ՈՐՈՇԵՑԻՆ – «Կիրառական մեխանիկա» առարկայի կուրսային նախագծերի թեմաները հաստատել և առաջադրանքները բաշխել:

5. ԼՍԵՑԻՆ- Ընթացիկ հարցեր:

5.1 ԼՍԵՑԻՆ- Տեխնոլոգիա և ձեռնարկչություն մասնագիտության մանկավարժահոգեբանական և ուսումնամեթոդական հմտություններ ապահովող մոդուլներով իրականացվող 30 կրեդիտի միջոցով մանկավարժի հավաստագրման կրթական ծրագրի մասնակիցների հետազոտական աշխատանքների թեմաների քննարկում և հաստատում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Օրոյան Ն.- Մանկավարժահոգեբանական և ուսումնամեթոդական հմտություններ ապահովող մոդուլներով իրականացվող 30 կրեդիտի միջոցով մանկավարժի հավաստագրման կրթական ծրագրին «Տեխնոլոգիա և ձեռնարկչություն» մասնագիտությամբ մասնակցում են այլ մասնագիտությամբ (պոլիտեխնիկական կրթությամբ) 2 ուսանող, ովքեր ցանկանում են դառնալ «Տեխնոլոգիա» առարկայի ուսուցիչներ (դասընթացի ուսումնաթեմատիկ պլանը կցվում է): Նրանք պետք է հետազոտական աշխատանք իրականացնեն հիմնական դպրոցում «Տեխնոլոգիա» առարկայի դասավանդման շրջանակներում:

Հետազոտական աշխատանքի թեմաներն են.

Սահակյան Անժելա – «Խոհարարություն» բաժնի դասավանդման առանձնահատկությունները «Տեխնոլոգիա» առարկայի 5-րդ դասարանում:

Պողոսյան Լուսինե – Հիմնական դպրոցի «Տեխնոլոգիա» առարկայի «Հագուստի նախագծում» թեմայի դասավանդումը ՏՀՏ-ների կիրառմամբ:

Արտահայտվեցին տեխ.գիտ.թեկն., դոցենտներ Բ.Խոդերյանը, Ս.Վարդանյանը, դոցենտ Ա.Հարությունյանը, ովքեր նշեցին, որ ընտրված թեմաները արդիական են, համապատասխանում են «Տեխնոլոգիա» առարկայի նոր չափորոշիչային պահանջներին և առաջարկեցին հաստատել:

Քննարկման արդյունքում

ՈՐՈՇԵՑԻՆ- Հաստատել Մանկավարժահոգեբանական և ուսումնամեթոդական հմտություններ ապահովող մոդուլներով իրականացվող 30 կրեդիտի միջոցով մանկավարժի հավաստագրման կրթական ծրագրի մասնակիրքների հետազոտական աշխատանքի թեմաները:

5.2 ԼՍԵՑԻՆ- Google Classroom էլեկտրոնային հարթակում ընթացիկ ստուգման բաղադրիչի գնահատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Վարդանյան Ս.- Google Classroom էլեկտրոնային հարթակում ընթացիկ ստուգման բաղադրիչի գնահատման համար անհրաժեշտ է տեղադրել նվազագույնը երկու գնահատվող առաջադրանք, բայց ոչ ավել քան չորսը՝ առնվազն մեկ

շաբաթ տևողությամբ: Արդյունքների միջին թվաբանական գնահատականը օգտագործել ams.aspu.am համակարգում **Ընթացիկ բաղադրիչը** գնահատելիս:

Առկա մագիստրատուրայում, հիբրիդային ուսուցման գործընթացում, այն դասընթացները, որոնք իրականացվում են առցանց ձևաչափով պետք է կազմակերպվեն դասացուցակին համապատասխան, ոչ ուշ քան տվյալ օրը ժամը 17:30: Տվյալ օրվա ամսաթվով Google Classroom հարթակի Streem դաշտում պետք է տեղադրվեն դասընթացի իրականացման գործընթացից առնվազն 3 էկրանային նկար՝ առանց խմբագրման, որտեղ պետք է տեսանելի լինեն միացված ուսանողները, ինչպես նաև տվյալ համակարգչի ամսաթիվն ու ժամանակը:

Ուղարկված է նաև հեռավար (դիստանցիոն) ձևերով ուսուցում չթույլատրվող բարձրագույն կրթության մասնագիտությունների ցանկերը հաստատելու մասին որոշումը:

Բոլոր նշված գործառույթները մշտադիտարկվելու են Կրթության էլեկտրոնային կառավարման բաժնի կողմից:

Քննարկման արդյունքում

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Տեղեկատվությունն ընդունելի գիտություն:

Նիստի նախագահ՝		Ա.Ի. Սահրադյան
Քարտուղար՝		Ս.Ո. Վարդանյան

2023թ. մարտի 27-ին կայացած Տեխնոլոգիական

կրթության ամբիոնի նիստի

Օրակարգում՝

1. Ուսումնական գործընթացների ընթացքը:
Ձեկ. դասախոսներ
2. 1-ին կուրսի մագիստրանտների մագիստրոսական թեզերի կատարման մասին:
Ձեկ. մագիստրոսական թեզերի ղեկավարներ
3. Մագիստրատուրա 1-ին և առկա 3-րդ կուրսի պրակտիկաների կազմակերպման մասին:
Ձեկ. դոցենտ Բ.Խողերյան
4. Ընթացիկ հարցեր:
4.1 Իրականացնել ամբիոնի նեքին աուդիտ դոցենտ Ս.Վարդանյանի ղեկավարությամբ՝ ընդգրկելով ամբիոնի մասնագետ Ա.Հակոբյանին և ամբիոնի ուսումնական վարպետ Հ.Հովհաննիսյանին (մեկ շաբաթ ժամանակահատվածում):
4.2 Ամբիոնի հայցորդ Գոհար Գազիկի Գրիգորյանի «Սովորողների տեխնիկական ստեղծագործական կարողությունների զարգացման մեթոդիկական տեխնոլոգիական կրթության գործընթացում» թեկնածուական ատենախոսության վերաբերյալ հայցորդի թեմայի վերահաստատման մասին:

Նիստին ներկա էին ամբիոնի բոլոր անդամները (ներկայաթերթը կցվում է):

Միաձայն հաստատվեց օրակարգը:

1. ԼՍԵՑԻՆ – Ուսումնական գործընթացների ընթացքն ամբիոնում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-1) Բ. Խողերյան-Ես դասավանդում եմ բակալավր 3-րդ, 4-րդ կուրսերում և մագիստրատուրա 1-ին, 2-րդ կուրսերում: Բակալավր 3-րդ և 4-րդ կուրսերի և մագիստրատուրա 2-րդ կուրսի հետ արդեն իսկ գրել ենք առաջին միջանկյալ գրավորը: Մագիստրատուրա 1-ին կուրսում առաջին միջանկյալը նախատեսված է այս շաբաթ: Բացակայություններ գրեթե չկան:

2) Ս.Վարդանյան-Ես դասավանդում եմ առկա բակալավրիատի 2-րդ, 3-րդ, 4-րդ, հեռակա բակալավրիատի 5-րդ կուրսերում և 1-ին և 2-րդ մագիստրատուրայում: 3-րդ և 4-րդ կուրսերի հետ արդեն անցկացրել ենք առաջին միջանկյալ ստուգումը: Հաճախումները նորմալ են, դասապրոցեսը՝ նույնպես:

3) Ն.Օրդյան- Ես դասավանդում եմ բակալավր 4-րդ կուրսում: Առաջին միջանկյալից հետո նորից սկսվել է դասապրոցեսը: Ինձ մոտ էլ ամեն ինչ նորմալ է: Բացակայություններ գրեթե չկան:

4) Ա.Հարությունյան-Այս կիսամյակում ես դասավանդում եմ բակալավր 3-րդ և 4-րդ կուրսերում, հեռակա բակալավր 5-րդ կուրսում և մագիստրատուրա 1-ին կուրսում: Ուսանողներն առաջին միջանկյալներն արդեն գրել են: Բակալավր 3-րդ և մագիստրատուրա 1-ին կուրսերը պետք է գնան պրակտիկայի, իսկ բակալավր 4-րդ կուրսերի հետ սկսել են դասապրոցեսը: Ամեն ինչ նորմալ է:

5) Տ.Այվազյան-Ես դասավանդում եմ 3-րդ, 4-րդ բակալավրիատում, 1-ին և 2-րդ մագիստրատուրայում և հեռակա 5-րդ կուրսում: Դասընթացներն ընթանում են բնականոն հունով: Ամեն ինչ նորմալ է:

6) Ա.Սահրադյան-Այս կիսամյակում ես դասավանդում եմ բակալավրիատի 3-րդ կուրսում և մագիստրատուրա 1-ին կուրսում: Երկու կուրսերի մոտ էլ ավարտել ենք դասընթացի առաջին մասը: նրանք պետք է գնան ուսումնական և մանկավարժահետազոտական պրակտիկայի: Ինձ մոտ էլ ոչ մի խնդիր չկա:

Քննարկման արդյունքում

ՈՐՈՇԵՑԻՆ – Ուսումնական գործընթացների վիճակը համարել բավարար:

2. ԼՄԵՑԻՆ- 1-ին կուրսի մագիստրանտների մագիստրոսական թեզերի կատարման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Սահրադյան Ա.-Ինձ մոտ մագիստրոսական թեզ է կատարում Օխիկյան Միլենան ««Բարձր հաճախականության հոսանքով ջերմամշակման տեխնոլոգիական առանձնահատկությունները» թեմայի դասավանդման հետազոտումը միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում»

թեմայով: Մագիստրոսն իրականացրել է գրականության վերլուծություն, ավարտել է թեզի ներածությունը և աշխատում է առաջին գլխի վրա:

Հարությունյան Ա.- Իմ ղեկավարությամբ մագիստրոսական թեզ են կատարում Հովհաննիսյան Նելլին «Սովորողների ստեղծագործական ունակությունների ձևավորումը <<Տեխնոլոգիա>> առարկայի դասերին» թեմայով և Ղուկասյան Անուշը «<<Ասեղնագործություն>> թեմայի դասավանդման առանձնահատկությունները 6-րդ դասարանում» թեմայով: Երկուսն էլ նորմալ աշխատում են: Պատրաստ է աշխատանքի ներածությունը և առաջին գլուխը:

Վարդանյան Ս.- Իմ ղեկավարությամբ մագիստրոսական թեզ է կատարում Ավետիսյան Նարեկը «Գրաֆիկական դիզայնը որպես սովորողների տարածաչափական ընկալումների և ստեղծագործական ունակությունների զարգացման գործոն» թեմայով: Մագիստրոսը իրականացնում է գրականության վերլուծություն, մշակել է թեմայի ներածական մասը և աշխատում է առաջին գլխի վրա:

Քննարկման արդյունքում

ՈՐՈՇԵՑԻՆ-Մագիստրատուրա 1—ին կուրսի մագիստրոսական թեզերի կատարման վիճակը համարել լավ:

3. ԼՍԵՑԻՆ- Մագիստրատուրա 1-ին և առկա 3-րդ կուրսի պրակտիկաների կազմակերպման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Խոդերյան Բ.- Բակալավրիատի 3-րդ կուրս պետք անցնի 3 շաբաթյա ուսումնական և 3 շաբաթյա բանկային պրակտիկա: Ուսումնական պրակտիկան անց է կացվելու «ԻՆՖՈՒՍ» կազմակերպությունում տեխ.գիտ.դոկտոր, պրոֆեսոր Ա.Ի.Սահրադյանի ղեկավարությամբ: Բանկային պրակտիկան անցկացնելու է Տնտեսագիտության և կառավարման ամբիոնը:

Մագիստրատուրա 1-ին կուրսի ուսոնդները պետք է անցնեն 3 շաբաթյա մանկավարժահետազոտական պրակտիկա իրենց թեզերի ղեկավարների ղեկավարությամբ: Պրակտիկայի ընթացքում մագիստրոսները պետք է իրականացնեն

հետազոտական աշխատանք իրենց թեզի թեմայի շրջանակներում, ինչպես նաև անցկացնեն փորձարարական դաս բակավարժիատի ուսանողների մոտ:

Քննարկման արդյունքում

ՈՐՈՇԵՑԻՆ- Մագիստրատուրա 1-ին և առկա 3-րդ կուրսի պրակտիկաների կազմակերպման մասին տեղեկատվությունն ընդունելի գիտություն:

4. ԼՍԵՑԻՆ- Ընթացիկ հարցեր:

4.1 ԼՍԵՑԻՆ- Իրականացնել ամբիոնի ներքին աուդիտ դոցենտ Ս.Վարդանյանի ղեկավարությամբ՝ ընդգրկելով ամբիոնի մասնագետ Ա.Հակոբյանին և ամբիոնի ուսումնական վարպետ Հ.Հովհաննիսյանին (մեկ շաբաթ ժամանակահատվածում):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Սահրադյան Ա.- Ինչպես արդեն գիտենք ԲՈՒՀ-ում մոտ ժամանակում իրականացվելու է մշտադիտարկում և աուդիտ «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի (ՈԱԱԿ)» կողմից:

Մինչ այդ ցանկալի է իրականացնել ներքին աուդիտ մեկ շաբաթվա ընթացքում դոցենտ Ս.Վարդանյանի ղեկավարությամբ՝ ընդգրկելով ամբիոնի մասնագետ Ա.Հակոբյանին և ամբիոնի ուսումնական վարպետ Հ.Հովհաննիսյանին:

Խնդրում եմ բոլոր դասախոսներին ծանոթանալ բակավարժիատի և մագիստրատուրայի մասնագիտական կրթական ծրագրերին, Տեխնոլոգիա և ձեռնարկչություն մասնագիտության ուսումնական պլաններին և անհրաժեշտության դեպքում կարգի բերել ձեր կողմից դասավանդվող առարկաների առարկայական նկարագրերն ու թեմատիկ տրոհումները:

Քննարկման արդյունքում

ՈՐՈՇԵՑԻՆ- Իրականացնել ամբիոնի ներքին աուդիտ դոցենտ Ս.Վարդանյանի ղեկավարությամբ՝ ընդգրկելով ամբիոնի մասնագետ Ա.Հակոբյանին և ամբիոնի ուսումնական վարպետ Հ.Հովհաննիսյանին (մեկ շաբաթ ժամանակահատվածում):

5.2 ԼՍԵՑԻՆ- Ամբիոնի հայցորդ Գոհար Գագիկի Գրիգորյանի «Սովորողների տեխնիկական ստեղծագործական կարողությունների զարգացման մեթոդիկական

տեխնոլոգիական կրթության գործընթացում» թեկնածուական
ատենախոսության վերաբերյալ հայցորդի թեմայի վերահաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Օրոյան Ն.-Գ.Գրիգորյանի
թեկնածուական ատենախոսության թեման, որը հաստատվել է 24.04.2022 թ.-ին ամբիոնի
թիվ 13 նիստում, անհրաժեշտ է վերաձևակերպել ելնելով ԲՈԿ-ի կողմից ներկայացվող
պահանջների: Ըստ այդմ որպես թեկնածուական ատենախոսության թեմա առաջարկվում
է «Սովորողների տեխնիկական ստեղծագործական կարողությունների զարգացման
մեթոդիկական տեխնոլոգիական կրթության գործընթացում»:

Թեմայի քննարկմանը մասնակցեցին և արտահայտվեցին, ֆիզ.մաթ.գիտ.թեկն.,
պրոֆ. պաշտոնակատար Տ.Ն.Այվազյանը, տեխ. գիտ. թեկնածու, դոցենտներ Բ.Ա.
Խողերյանը, Ն.Ա. Օրոյանը, Ս.Ո.Վարդանյանը, դոցենտ Ա.Հ.Հարությունյանը, ովքեր
նշեցին, որ ատենախոսության թեման արդիական է, հիմնավորված և
համապատասխանում է ԲՈԿ-ի կողմից ներկայացվող պահանջներին:

Քննարկման արդյունքում

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Վերահաստատել Տեխնոլոգիական կրթության ամբիոնի հայցորդ
Գոհար Գազիկի Գրիգորյանի «Սովորողների տեխնիկական ստեղծագործական
կարողությունների զարգացման մեթոդիկական տեխնոլոգիական կրթության
գործընթացում» վերնագրով ատենախոսության թեման, տեխ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
Արտակ Իսրայելի Սահրադյանի գիտական ղեկավարությամբ:

Նիստի նախագահ՝		Ա.Բ. Սահրադյան
Քարտուղար՝		Ս.Ո. Վարդանյան

2023թ. ապրիլի 21-ին կայացած Տեխնոլոգիական

կրթության ամբիոնի նիստի

Օրակարգում՝

1. «Տեխնոլոգիա և ձեռնարկչություն» մասնագիտության առկա մագիստրատուրա 2-րդ կուրսի նախապաշտպանության մասին:
2. «Տեխնոլոգիա և ձեռնարկչություն» մասնագիտության առկա բակալավրիատի 4-րդ կուրսի նախապաշտպանության մասին:
3. Ընթացիկ հարցեր:

Նիստին ներկա էին ամբիոնի թվով 9 անդամն, 6 ուսանող և գիտահետազոտական կենտրոնի 1 ներկայացուցիչ (ներկայաթերթը կցվում է):

Միաձայն հաստատվեց օրակարգը:

1. ԼՍԵՅԻՆ – «Տեխնոլոգիա և ձեռնարկչություն» մասնագիտության առկա մագիստրատուրա 2-րդ կուրսի նախապաշտպանության մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-1)Սահբաղյան Ա. - Հարգելի գործընկերներ և ուսանողներ այսօր նախատեսված է մագիստրոսական թեզերի նախապաշտպանությունը: ԱՄբիոնում մասիտրոսական հետազոտություն են կատարել

2) Պետրոսյան Հ.- Մագիստրոսական թեզի թեման է «Մովորողների տեխնիկական ստեղծագործական ունակությունների զարգացումը կրթական ռոբոտատեխնիկայի միջոցով», ղեկավարը տեխ.գիտ.թեկն., դոցենտ Բ.Ա.Խողերյան:

Հ.Պետրոսյանը ներկայացրեց տեխնիկական և ստեղծագործական ունակությունների զարգացման հիմնական միջոցները, առանձնացրեց ռոբոտատեխնիկական որպես կարևորագույն միջոց: Ներկայացրեց իր փորձարարական աշխատանքը, որն իրականացրել էր դպրոցում աշակերտների հետ կրթական ռոբոտների կիրառմամբ:

Մագիստրոսին տվեցին հարցեր, որոնց նա պատասխանեց:

3) Գրիգորյան Միլենա – Մագիստրոսական թեզի թեման է «Էլեկտրական էներգիայի ստացումը վերականգնվող էներգիայի աղբյուրների օգնությամբ» թեմայի դասավանդման մեթոդիկական միջին մասնագիտական հաստատություններում: Թեզի ղեկավարն է Ֆիզ.մաթ.գիտ., թեկն, պրոֆ.պաշտ. Տ.Մ.Այվազյանը:

Մ.Գրիգորյանը ներկայացրեց էներգիայի ստացման այլ աղբյուրների տեսակները, նշեց նրանց առանձնահատկությունները, էներգիայի ստացման եղանակները: Մ.Գրիգորյանը նշեց այս թեմայի դասավանդման կարևորությունը միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում, նշեց այն մեթոդները, որոնց միջոցով իրականացրել է թեմայի դասավանդում:

Մագիստրոսին տվեցին հարցեր, որոնց նա պատասխանեց:

4) Սարգսյան Կարինե – Մագիստրոսական թեզի թեման է «Փայտամշակման տեխնոլոգիա» բաժնի դասավանդման առանձնահատկությունները միջին դպրոցում: Թեզն իրականացնում է դոցենտ Ա.Հ.Հարությունյանի ղեկավարությամբ:

Կ.Սարգսյանը ներկայացրեց փայտամշակման իրականացման հիմնական հաստոցները, գործիքները, հարմարանքները: Առանձնացրեց այն առանձնահատկությունները, որոնք բնորոշ են փայտամշակման տեխնոլոգիային: Ներկայացրեց այդ բաժնի դասավանդման մեթոդները, առանձնահատկությունները, կազմակերպման եղանակները:

Մագիստրոսին տվեցին հարցեր, որոնց նա պատասխանեց:

Արտահայտվեցին դասախոսները, ովքեր իրենց կարծիքները հայտնեցին մագիստրոսների կատարած աշխատանքների վերաբերյալ՝ նշելով թերությունները:

Վերջում քննարկումն ամփոփեց ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ա.Սահրադյանը, նշելով որ մագիստրոսական թեզերը կատարված էին պատշաճ մակարդակով, համապատասխանում էին մագիստրոսական թեզին ներկայացվող պահանջներին, միաժամանակ ասաց, որ աշխատանքներում կան որոշակի թերություններ, որոնց վերացման և ճշգրտման համար անհրաժեշտ է ղեկավարի հետ միասին աշխատել և վերացնել դրանք:

Արդյունքում առաջարկեցին երաշխավորել պաշտպանության:

Քննարկման արդյունքում

ՈՐՈՇԵՑԻՆ – 2022-2023 ուսումնական տարվա «Տեխնոլոգիա և ձեռնարկչություն» մասնագիտության առկա մագիստրատուրայի 2-րդ կուրսի մագիստրոսական թեզերը երաշխավորել պաշտպանության:

2. ԼՍԵՑԻՆ – «Տեխնոլոգիա և ձեռնարկչություն» մասնագիտության առկա քակալավրիատի 4-րդ կուրսի նախապաշտպանությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-1) Մախմուրյան Անուշ- Ավարտական աշխատանքի թեման է «Աշակերտների ինքնուրույնության և նախաձեռնության ձևավորումը «Տեխնոլոգիա» առարկայի շրջանակներում»: Ավարտական աշխատանքի ղեկավարն է տեխ.գիտ.թեկն., դոցենտ Ն.Ա.Օրոյանը:

Ա.Մախմուրյանը ներկայացրեց այն հիմնական միջոցները, որոնք նպաստում են աշակերտների ինքնուրույնության և նախաձեռնության ձևավորմանը: Որպես օրինակ ներկայացրեց ձեռագործ աշխատանքի կատարում մաքրամեյից: Ներկայացրեց աշխատանքի կատարման քայլաշարը, ինչպես նաև անդրադարձավ այն հիմնական մեթոդներին, որոնց միջոցով իրականացնելով դասավանդումը կնպաստեն սովորողների ինքնուրույնության ձևավորմանը:

Ուսանողին տրվեցին հարցեր, որոնց նա պատասխանեց:

2) Հարությունյան Կարինե – Ավարտական աշխատանքի թեման է ««Գաղափար հումքի, կիսաֆաբրիկատների, պահածոների մասին» թեմայի դասավանդման առանձնահատկությունները «Տեխնոլոգիա» առարկայի շրջանակներում»: Աշխատանքի ղեկավարն է տեխ.գիտ.թեկն., դոցենտ Բ.Ա.Խողերյանը:

Կ.Հարությունյանը ներկայացրեց կիսաֆաբրիկատների և պահածոների պատրաստման եղանակները, նրանց նշանակությունը: Ներկայացրեց պահածոների ստերիլիզացումը, մթերքի մշակում և ջերմամշակումը: Անդրադարձավ նաև այդ թեմայի դասավանդման առանձնահատկություններին:

Ուսանողին տրվեցին հարցեր, որոնց նա պատասխանեց:

3) Նազարեթյան Շուշան – Ավարտական աշխատանքի թեման է ««Գծագրություն» դասընթացի «Կտրվածքներ» բաժնի դասավանդումն ավագ դպրոցի ինժեներական

հոսքում՝ «Գործողությունների հետազոտումը դասասենյակում» մեթոդի կիրառմամբ»:
Աշխատանքի ղեկավարն է տեխ.գիտ.թեկն., դոցենտ Ս.Ո.Վարդանյանը:

Շ.Նազարեթյանը ներկայացրեց «Կտրվածքներ» բաժնի դասավանդումը ավագ դպրոցում՝ հաշվի առնելով աշակերտների տարիքային առանձնահատկությունները:
Ներկայացրեց «Գործողությունների հետազոտումը դասասենյակում» մեթոդի էությունը, կիրառման հնարավորությունները: Ցույց տվեց կիրառման օրինակներ:

Ուսանողին տվեցին հարցեր, որոնց նա պատասխանեց:

Արտահայտվեցին տեխ.գիտ.դոկտոր, պրոֆեսոր Ա.Բ.Սահրադյանը, ֆիզ.մաթ.գիտ.թեկն., պրոֆ պաշտ. Ս.Մ.Այվազյանը, տեխ.գիտ.թեկն., դոցենտներ Բ.Ա.Խոդերյանը, Ն.Ա.Օրդյանը, Ս.Ո.Վարդանյանը, դոցենտ Ա.Հ.Հարությունյանը, ովքեր իրենց կարծիքները հայտնեցին ավարտական աշխատանքների վերաբերյալ՝ նշելով թերությունները: Նշեցին, որ չնայած որոշ թերություններին ավարտական աշխատանքները համապատասխանում են ներկայացվող պահանջներին և թերությունները շտկելու դեպքում երաշխավորվում է հրապարակային պաշտպանության:

Քննարկման արդյունքում

ՈՐՈՇԵՑԻՆ – 2022-2023 ուսումնական տարվա առկա բակալավրիատի 4-րդ կուրսի ավարտական աշխատանքները երաշխավորել պաշտպանության:

Նիստի նախագահ՝		Ա.Բ. Սահրադյան
Քարտուղար՝		Ս.Ո. Վարդանյան

2023թ. ապրիլի 28-ին կայացած Տեխնոլոգիական

կրթության ամբիոնի նիստի

Օրակարգում՝

1. Ամբիոնի հայցորդ Աննա Սամվելի Հակոբյանի «Ինժեներական մտածողության ձևավորման առանձնահատկությունները հիմնական դպրոցի «Տեխնոլոգիա» առարկայի ուսուցման գործընթացում» վերնագրով ատենախոսության նախապաշտպանություն:
2. Ընթացիկ հարցեր:

Նիստին մասնակցում էին ՀՊՄՀ Տեխնոլոգիական կրթության ամբիոնի վարիչ, տեխ.գիտ.դոկտոր, պրոֆեսոր Ա.Ի.Սահրադյանը /նիստի նախագահ և ատենախոսության գիտական ղեկավար/, ամբիոնի դասախոսներ՝ ֆիզ.մաթ.գիտ.թեկն., պրոֆ.պաշտ. Տ. Մ.Այվազյանը, տեխ.գիտ.թեկն., դոցենտ Բ.Ա.Խողերյանը, տեխ.գիտ.թեկն., դոցենտ Ն.Ա.Օրոյանը, տեխ.գիտ.թեկն., դոցենտ Ս.Ո.Վարդանյանը, դոցենտ Ա.Հ.Հարությունյանը, ուսումնական վարպետ Հ.Հ.հովհաննիսյանը, Տեխնոլոգիական կրթության ամբիոնի հայցորդ Հ.Այվազյանը, Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի դեկան ֆիզ.մաթ. գիտ. դոկտոր, պրոֆ. պաշտ. Գ.Գ.Դեմիրխանյանը, Մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի մանկ.գիտ. դոկտոր, ֆիզ. մաթ. գիտ. թեկ., պրոֆեսոր Հ.Ս.Միքայելյանը, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Գ.Ռ.Ղուլազարյանը, Մանկավարժության ամբիոնի մանկ.գիտ.թեկն., դոցենտ Լ.Հ.Նազարյանը, մանկ.գիտ.թեկն., դոցենտ Գ.Ն.Հարությունյանը, Մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի մանկ. գիտ. թեկն., դոցենտ Կ.Հ.Աղաբաբյանը (ներկայաթերթը կցվում է):

Միաձայն հաստատվեց օրակարգը:

ԼՍԵՑԻՆ – Խ.Աբովյանի անվան հայակական պետական մանկավարժական համալսարանի Տեխնոլոգիական կրթության ամբիոնի հայցորդ Աննա Սամվելի Հակոբյանի ԺԳ00.02- Դասավանդման և ուսուցման մեթոդիկա (Ընդհանուր տեխնիկական առարկաների դասավանդման մեթոդիկա) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ներկայացված «Ինժեներական մտածողության ձևավորման

առանձնահատկությունները հիմնական դպրոցի «Տեխնոլոգիա» առարկայի ուսուցման գործընթացում» վերնագրով ատենախոսության նախապաշտպանությունը:

Ներկայացնելով իր հետազոտության հիմնադրությունները՝ ատենախոսը մասնավորապես նշեց.

Հակոբյան Ա.Ս.- «Ինժեներական մտածողության ձևավորման առանձնահատկությունները հիմնական դպրոցի «Տեխնոլոգիա» առարկայի ուսուցման գործընթացում թեմայով մեր հետազոտության արդիականությունը պայմանավորված է.

- տեղեկատվական տեխնոլոգիաների (SS) զարգացմամբ,
- ժամանակակից հասարակության պահանջների ու սովորողների կրթական կարողությունների միջև անհամապատասխանությամբ,
- կրթական գործընթացում սովորողների տեխնիկական և ստեղծագործական գործունեության կազմակերպման և այդ գործընթացում անհրաժեշտ ուսուցման միջոցների, նյութատեխնիկական բազայի բացակայությամբ,
- «Տեխնոլոգիա» առարկայի դասընթացում սովորողների ինժեներական մտածողության ձևավորման ավանդական մոտեցումների և ժամանակակից մեթոդների ու միջոցների կիրառման անհամամասնությամբ,
- աշխատաշուկայում կոմպետենտ մասնագետների պահանջարկի և առկա մասնագետների անհրաժեշտ պատրաստվածության մակարդակի միջև անհամապատասխանությամբ:

Ինժեներական մտածողության ձևավորումը հանրակարթական դպրոցում ուսուցման արդյունավետության բարձրացման կարևորագույն հիմնախնդիրներից մեկն է:

Մասնավորապես, միջին դպրոցում ինժեներական մտածողության ձևավորումն իր ուրույն դերն ու կարևորությունն ունի, քանի որ հենց այս տարիքում է ձևավորվում երեխայի հետագա կյանքի համար հիմնարար նշանակություն ունեցող մի շարք կարողություններ և հմտություններ:

Հմտությունների, կարողությունների և ընդունակությունների զարգացման ողջ ընթացքը ենթադրում է նրա մտածողության ձևավորման խնդրի առավել ծավալուն ուսումնասիրություններ: Նրանում կարևորագույն տեղ է զբաղեցնում սովորողների ինժեներական մտածողության ձևավորման հիմնախնդիրը:

Ներկայիս աշխատաշուկայի պահանջներին համապատասխան ապագա մասնագետի ինժեներական մտածողության հիմքերը դրվում է հանրակրթական դպրոցում բնագիտական

առարկաների դասավանդման՝ մասնավորապես «Տեխնոլոգիա» առարկայի դասավանդման գործընթացում:

«Տեխնոլոգիա» առարկայի նպատակն է ձևավորել ստեղծարար, նորարար, նախաձեռնող, ձեռնարկատիրական մտածողություն, ազգային նկարագիր ունեցող անձ, ով աշխատանքի պրակտիկ ձևերին և նորագույն տեխնոլոգիաներին տիրապետելու, ռեսուրսներն արդյունավետ տնօրինելու միջոցով ստեղծում է մարդկային կարիքներին ու ցանկություններին համապատասխանող ապրանքներ, ծառայություններ և համակարգեր:

Ինժեներական մտածողության ձևավորումն ու զարգացումը «Տեխնոլոգիա» առարկայի ուսուցման գործընթացում՝ որպես տեխնիկական և ստեղծագործական կարողությունների զարգացման միջոց, դեռևս քիչ է ուսումնասիրված, որն էլ ընկած է սույն հետազոտության թեմայի ընտրության հիմքում:

Հետազոտության նպատակը հիմնական դպրոցում «Տեխնոլոգիա» առարկայի ուսուցման գործընթացում սովորողների ինժեներական մտածողության ձևավորման արդյունավետ մեթոդական համակարգի մշակումն է:

Հետազոտության օբյեկտը հիմնական դպրոցում «Տեխնոլոգիա» առարկայի ուսուցման գործընթացն է:

Հետազոտության առարկան հիմնական դպրոցում սովորողների ինժեներական մտածողության ձևավորման արդյունավետ մեթոդական համակարգն է:

Հետազոտության վարկածն այն ենթադրության մեջ է, որ հանրակրթական դպրոցում սովորողների ինժեներական մտածողության ձևավորման գործընթացն առավել արդյունավետ կլինի, եթե՝

- Ուսումնասիրվի և նորովի սահմանվի «ինժեներական մտածողություն» հասկացությունը:
- Բացահայտվի ինժեներական մտածողության կառուցվածքը, առանձնահատկությունները և զարգացման մակարդակները:
- Հայտորոշվեն սովորողների ինժեներական մտածողության մակարդակը՝ հիմք ընդունելով Բեննետի թեստը:
- Կիրառվեն ինժեներական մտածողության ձևավորման արդյունավետությունն ապահովող մանկավարժական պայմաններ՝ ուսուցման մեթոդներ, միջոցներ և տեխնոլոգիաներ, տեխնիկաստեղծագործական առաջադրանքներ, հարմարավետ կրթական միջավայր:

- Մշակվի և «Տեխնոլոգիա» առարկայի ուսուցման գործընթացում ներդրվի ինժեներական մտածողության ձևավորման արդյունավետ մեթոդական համակարգ:

Հետազոտության խնդիրներն են՝

1. Հիմնվելով գիտամեթոդական և հոգեբանամանկավարժական գրականության վերլուծության վրա՝ բացահայտել ինժեներական մտածողության առանձնահատկությունները, կառուցվածքը և մշակել գնահատման չափանիշները:
2. Ուսումնասիրել ինժեներական մտածողության ձևավորման և զարգացման տեսական և հայեցակարգային մոտեցումները, ճշգրտել և նորովի սահմանել «ինժեներական մտածողություն» հասկացությունը:
3. Հիմնավորել ՏՀՏ-ների կիրառման, ինչպես նաև տեխնոլոգիայի և հանրակրթական մյուս առարկաների միջառարկայական ինտեգրման ազդեցությունը աշակերտների ինժեներական մտածողության ձևավորման վրա:
4. Մշակել և «Տեխնոլոգիա» առարկայի դասավանդման գործընթացում ներդնել սովորողների ինժեներական մտածողության ձևավորմանը նպաստող արդյունավետ մեթոդական համակարգ:
5. Փորձարարությամբ հիմնավորել մշակված մեթոդական համակարգի արդյունավետությունը:

Հետազոտության մեթոդաբանական հիմք են հանդիսացել՝

- անձնակենտրոն մոտեցման սկզբունքները (Լ.Ս. Վիգոտսկի, Ա. Մալոու, Ի.Ս. Յակիմսկայա, Ե.Վ.Բոնդարևսկայա Ա.Օ.Թոփուզյան, Ա.Հ. Սարգսյան և այլք),
- ինժեներական մտածողության և ստեղծագործական գործունեության հիմնախնդիրն ուսումնասիրող հոգեբանական և մանկավարժական հետազոտությունները (Ջ.Դյուի, Վ.Վ.Դավիդով, Ի.Ա.Զիմնայան, Յա.Ա.Պոնոմարև, Տ.Վ.Կուրյավցևը, Բ.Ֆ.Լոմովը, Վ.Ա.Մոյսակոն Ս.Վ. Կոմարով և այլք),
- ուսուցման ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաների, մեթոդների և ձևերի վերաբերյալ տեսությունները (Պ.Յա.Գալպերին, Ա.Յու.Ալեխին,Գ.Յա.Բուշ, Ա.Ա.Բալենա, Լ.Թ.Ասատրյան, Հ.Հ.Պետրոսյան, Մ.Գ.Աստվածատրյան և այլք),
- կոմպլեքսային մոտեցումը (Ա.Ն.Շուկին, Ա.Վ.Խուստրսկոյ, Ն.Վ.Դոմինևա, Ա.Կ.Մարկով և այլք),

- գործունեական մոտեցում (Լ.Ս.Վիգոստկի, Ա.Ա.Լեոնտև, Ս.Լ.Ռուբենշտեյն և այլք):

Հետազոտության մեթոդները.

Առաջադրված խնդիրները լուծելու համար կիրառվել են հետևյալ մեթոդները.

Տեսական մեթոդներ՝ հետազոտության հիմնախնդրին վերաբերվող մանկավարժական, հոգեբանական, մասնագիտական գրականության, ատենախոսությունների, գիտամանկավարժական հոդվածների հետազոտություն, համադրում և համեմատում, ստացված արդյունքների վերլուծություն:

Էմպիրիկ մեթոդներ՝ դիտում, փորձարարական ուսուցում, հայտորոշիչ թեստավորում, հարցում, մոդելավորում:

Մաթեմատիկական վիճակագրական մեթոդների կիրառում՝ փորձարարական հետազոտության արդյունքների քանակական և որակական վերլուծություն, տվյալների հավաքագրում, մշակում, համեմատում, նկարագրում, աղյուսակների և դիագրամների կազմում:

Հետազոտության գիտական նորույթը.

1. Բացահայտվել և տեսականորեն հիմնավորվել է ինժեներական մտածողության առանձնահատկությունները:
2. Հստակեցվել և նորովի է սահմանվել «ինժեներական մտածողություն» հասկացությունը:
3. Փորձարկվել և տեղայնացնվել է սովորողների ինժեներական մտածողության ձևավորմանը միտված ժամանակակից մեթոդներ, ուսուցման տեխնոլոգիաներ, տեխնիկական և ստեղծագործական խնդիրներ և առաջադրանքներ:
4. Հաշվի առնելով առարկայի բովանդակությունը, առարկայական չափորոշիչները և ինժեներական մտածողության զարգացման մակարդակների վերաբերյալ մոտեցումները՝ մշակվել է միջին դպրոցում սովորողների ինժեներական մտածողության ձևավորվածության մակարդակները և դրանք որոշող չափանիշներ:
5. Մշակվել է «Տեխնոլոգիա» առարկայի ուսուցման գործընթացում դպրոցականների ինժեներական մտածողության ձևավորումն ապահովող մեթոդական համակարգ, որը ներառում է մեթոդաբանական հիմքերը, առանձնահատկությունները, ուսուցման նպատակները, խնդիրները, մանկավարժական պայամանները, ուսուցման սկզբունքները, տեխնոլոգիաները, մեթոդներն ու միջոցները, ուսուցչի մասնագիտական կոմպետենցիաները և ակնկալվող վերջնարդյունքը:

Հետազոտության տեսական նշանակությունը.

- Հետազոտության արդյունքները կբացահայտեն հիմնական դպրոցում «Տեխնոլոգիա» առարկայի դասավանդման գործընթացում ինժեներական մտածողության ձևավորման հնարավորությունները:
- Հետազոտության արդյունքում ստացված տվյալները և դրանց հիման վրա կատարված եզրակացություններն ու առաջարկությունները կհարստացնեն «Տեխնոլոգիա» առարկայի դասավանդման մեթոդական համակարգը:
- Սովորողների ինժեներական մտածողության ձևավորման մեթոդական համակարգը նպաստում է մտածողության և գործունեության միջև փոխհարաբերությունների բնույթի բացահայտմանը:

Հետազոտության գործնական նշանակությունը.

- Հետազոտության տեսական դրույթները, տեղայնացված մեթոդները առաջադրված հանձնարարությունները զգալի օգնություն կհանդիսանան տեխնիկական առարկաների դասավանդման ոլորտի մանկավարժների համար:
- Առաջադրված մեթոդական համակարգի արդյունավետության փորձարարական արդյունքները կարող են օգտագործվել նոր ուսումնական և ուսումնամեթոդական ձեռնարկների մշակման համար:
- Ստացված արդյունքները կարող են ներդրվել ուսուցիչների վերապատրաստման և մասնագիտական կատարելագործման համակարգում:

Պաշտպանության ներկայացվող դրույթները.

1. Ինժեներական մտածողությունը, հանդիսանալով մտածողության կարևորագույն տեսակներից մեկը, ձևավորվում է բնագիտամաթեմատիկական առարկաների, արվեստ և արհեստ ուսումնական բնագավառների ուսուցման՝ մասնավորապես «Տեխնոլոգիա» առարկայի ուսուցման գործընթացում:
2. Ինժեներական մտածողությունը համակարգային մտածողություն է, որի կառուցվածքում առանձնանում են միմյանց փոխկապակցված չորս բաղադրիչներ՝ տեխնիկական մտածողություն, կառուցողական մտածողություն, հետազոտական մտածողություն և տնտեսագիտական մտածողություն:
3. Հիմնական դպրոցում «Տեխնոլոգիա» առարկայի ուսուցման գործընթացում սովորողների ինժեներական մտածողության ձևավորումը և զարգացումը ապահովել հատուկ մշակված մեթոդական համակարգի ներդրման միջոցով, որը ենթադրում է ժամանակակից մեթոդների կոնկրետացում և տեղայնացում, համապատասխան

բովանդակության և մեթոդաբանական գործիքակազմի ընտրություն, մանկավարժական ակտիվ պայամանների ապահովում և վերջնարդյունքերի սահմանում:

4. Ինժեներական մտածողության ձևավորման մեթոդական համակարգի մշակումը հիմնված է ինժեներական մտածողության ամբողջական կառուցվածքի բացահայտման և դրա յուրաքանչյուր բաղադրիչի հետագա ձևավորման վրա:
5. Ուսուցման ժամանակակից մեթոդների և տեխնոլոգիաների կիրառմամբ մեթոդական համակարգի գործածությունը գնահատելի է դարձնում սովորողների ինժեներական մտածողության ձևավորվածության մակարդակը:

Հետազոտության անցած փորձաքննությունը: Հետազոտության իրականացման համար փորձարարական բազա է հանդիսացել Երևանի Արմեն Հովհաննիսյանի անվան թիվ 194 հիմնական դպրոցը:

Առաջարկված մեթոդներով փորձարարական ուսուցում է իրականացվել Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի թիվ 57 հիմնական դպրոցում, Երևանի Մովսես Ջամբազյանի անվան թիվ 79 հիմնական դպրոցում և Խրիմյան Հայրիկի անվան թիվ 10 դպրոցում:

Հետազոտության ընթացքի և արդյունքների մասին պարբերաբար զեկուցումներ են իրականացվել.

- Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի Տեխնոլոգիական կրթության ամբիոնի նիստերում և գիտամեթոդական սեմինարներում,
- «Տեխնոլոգիա» կրթական ոլորտի հիմնախնդիրները» խորագրով գիտաժողովում (2015թ.),
- ՀՀ ԱԲՆ Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի 25-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովում (2017թ.),
- III Международной очно-заочной научно-практической конференции «Проблемы и перспективы современного физико-математического, информационного и технологического образования» Новокузнецк (2019г.),
- «Տեխնոլոգիա» առարկայի դրվածքը դպրոցում և ապագայի տեսլականը» խորագրով գիտաժողովում (2022թ.):

Ատենախոսության հիմնական դրույթներով տպագրվել է հոդվածներ ԲՈԿ-ի կողմից ընդունելի գիտական պարբերականներում և ռուսական պարբերականներում:

Հետազոտությունն իրականացվել է երեք փուլով՝

Առաջին փուլում (2016-2017թթ.) հավաքագրվել, ուսումնասիրվել և վերլուծության է ենթարկվել հիմնահարցի վերաբերյալ գիտամեթոդական գրականություն, «Տեխնոլոգիա» առարկայի ուսումնական պլանը, «Տեխնոլոգիա» առարկայի չափորոշիչը և ծրագիրը, դասագրքերը, համացանցային նյութեր: Հիմնավորվել է հետազոտության արդիականությունը, ճշգրտվել և հստակեցվել է հետազոտության նպատակը, խնդիրները և վարկածը:

Երկրորդ փուլում (2017-2020թթ.) նախագծվել է գիտափորձի անցկացման քայլերի հաջորդականությունը: Ուսումնասիրվել է հանրակրթական դպրոցում ինժեներական կրթության իրականացման հնարավորությունները և ինժեներական մտածողության ձևավորման մեթոդները: Շարունակվել է գիտական, մեթոդական և մանկավարժական գրականության ուսումնասիրումն ու վերլուծությունը: Անցկացվել է հայտորոշիչ թեստավորում, կատարվել արդյունքերի վերլուծություն: Իրականացվել է ինժեներական մտածողության ձևավորման մեթոդների և տեխնոլոգիաների արդյունավետության փորձարկում հիմնական դպրոցի 5-7-րդ դասարաններում: Ստացված տվյալների արդյունքում մշակվել է ինժեներական մտածողության ձևավորմանը միտված մեթոդական համակարգ:

Երրորդ փուլում (2020-2022թթ.) իրականացվել է առաջադրված վարկածի փորձարարական ստուգում, փորձարարական աշխատանքների ընթացքում ստացված արդյունքների վերլուծություն, համակարգում, ընդհանրացում և ամփոփում: Կատարվել է աշխատանքի վերջնական խմբագրում, հստակեցվել՝ ատենախոսության բովանդակությունը և կառուցվածքը, ձևակերպվել՝ եզրակացությունները:

Հետազոտության արդյունքների հիմնավորվածությունը և հավաստիությունը ապահովում են համապատասխան գիտամեթոդական գրականության մեջ առկա հայեցակարգային մոտեցումները, հետազոտության առարկային, օբյեկտին, նպատակին և խնդիրներին համապատասխան մշակված և կիրառված մեթոդական համակարգը, հետազոտության փուլերի տրամաբանական հաջորդականությունն ու փոխկապակցվածությունը, փորձարարության համար նախատեսված ուսուցման տեխնոլոգիաների և մեթոդների ճիշտ ընտրությունը, կիրառված թեստերի հուսալիությունը, ամփոփիչ թեստավորման արդյունքները, ստացած արդյունքների վերլուծությունն ու եզրակացությունների հիմնավորումը:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Այն ներառում է 15 աղյուսակ, 4 տրամագիր, 6 նկար, 5 գծապատկեր:

Ատենախոսության ընդահնուր ծավալը կազմում է համակարգչային 164 էջ, ներառյալ՝ գրականության ցանկը՝ 16 էջ: Հավելվածները կազմում են 18 էջ:

Օգտագործվել է 157 աղբյուր՝ հայերեն և օտար լեզուներով:

Ատենախոսության առաջին գլուխը՝ «Ինժեներական մտածողության ձևավորման տեսական հիմքերը» գլուխը, բաղկացած է երեք ենթագլխից.

- «Մտածողության էությունը և առանձնահատկությունները»,
- «Ինժեներական մտածողության կառուցվածքը և առանձնահատկությունները»,
- «Սովորողների ինժեներական մտածողության ձևավորման հայեցակարգային մոտեցումների վերլուծությունը»:

Այս գլխում անդրադարձ է կատարվել մտածողության որպես ճանաչողական գործընթացի, ներկայացվել է մտածողության տեսակները և առանձնահատկությունները: Մտածողության տեսակներից առանձնացվել է ինժեներական մտածողությունը՝ որպես սովորողների տեխնիկական և ստեղծագործական կարողությունների զարգացման միջոց:

Վերլուծելով հիմնախնդրի վերաբերյալ առկա մանկավարժական մոտեցումները՝ այս գլխում վեր են հանվել մի շարք հիմնահարցեր, որոնց կարգավորման նպատակով.

- ✓ Բացահայտվել է ինժեներական մտածողության կառուցվածքը.
 - Տեխնիկական մտածողություն, որը պատասխանատու է տեխնիկական սարքերի կառուցվածքը և կազմը ուսումնասիրելու համար, ինչպես նաև վերլուծում է նրանց աշխատանքի սկզբունքը:
 - Կառուցողական մտածողություն, որը բնութագրվում է դրված պրոբլեմի կամ խնդրի լուծման որոշակի մոդելի կառուցմամբ, ինչը տեղի է ունենում տեսության և պրակտիկայի փոխկապակցման արդյունքում:
 - Հետազոտական մտածողություն՝ իրենից ներկայացնում է պրակտիկ գործունեության ընթացքում ձեռք բերված փորձի հիման վրա նոր նպատակների ձևավորման ունակությունը, խնդիրների լուծման դեպքում տեխնիկական փաստաթղթերի հետ աշխատելու կարողությունը:
 - Տնտեսագիտական մտածողություն, որն իր մեջ ներառում է գործընթացի որակի և գործունեության արդյունքի արտացոլումը շուկայական պահանջների տեսանկյունից:
- ✓ Բացահատվել և առանձնացվել է ինժեներական մտածողության առանձնահատկությունները.
 - կրիտիկական իրավիճակի առկայություն,
 - վերլուծություն ու նպատակադրում,

- տեխնիկական և ֆիզիկական հակասությունները բացահայտելու և ի սկզբանե մտածողությունը դեպի իդեալական լուծումը գիտակցաբար կողմնորոշելու կարողություն,
- խնդիրը բազմակողմանի դիտարկում,
- մտավոր գործունեության կողմնորոշումը դեպի առավել հեռանկարային ուղղություն,
- ամեն ինչում կառուցվածքը տեսնելու ունակություն,
- ռեսուրսների արդյունավետ բաշխում՝ նվազագույն գնով առավելագույն արդյունավետության հասնելու համար:

✓ Նորովի է սահմանվել «ինժեներական մտածողություն» հասկացությունը.

Ինժեներական մտածողությունը համակարգային մտածողություն է, կազմված՝ տեխնիկական, կառուցողական, հետազոտական և տնտեսագիտական բաղադրիչներից, ենթադրում է խնդրահարույց իրավիճակներում արագ կողմնորոշում, առաջադրված տեխնիկական և ստեղծագործական խնդիրների բազմակողմանի դիտարկում և արդյունավետ լուծում:

Ատենախոսության երկրորդ գլուխը՝ «Ինժեներական մտածողության ձևավորման արդյունավետ ուղիները հիմնական դպրոցի «Տեխնոլոգիա» առարկայի ուսուցման գործընթացում», բաղկացած է երեք ենթագլխից.

- «Ինժեներական մտածողության ձևավորման և զարգացման մեթոդական մոտեցումների վերլուծություն»,
- «Միջառարկայական կապերը՝ որպես ինժեներական մտածողության զարգացման միջոց»,
- «Հիմնական դպրոցում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառման հնարավորությունները ինժեներական մտածողության ձևավորման գործում»:

Այս գլխում իրականացվել է ինժեներական մտածողության ձևավորման և զարգացման մեթոդական մոտեցումների վերլուծություն, ներկայացվել է ժամանակակից ստեղծարար մի շարք մեթոդների կիրառման առանձնահատկությունները և նշվել է, որ մեթոդների ընտրությունը իրականացվում է հաշվի առնելով սովորողների տարիքային առանձնահատկությունը, նրանց պատրաստվածության մակարդակը և ուսումնասիրվող նյութի բարդության աստիճանը:

Ելնելով այն հանգամանքից, որ «Տեխնոլոգիա» առարկան հանդիսանում է ինտեգրված առարկա, հետևաբար դրա ուսուցման գործընթացում ի հայտ են գալիս միջառարկայական կապեր

մաթեմատիկայի, ֆիզիկայի, բնագիտության, քիմիայի և այլ առարկաների միջև: Այս գլխում տեսականորեն հիմնավորվել է միջառարկայական ինտեգրման ազդեցությունը ինժեներական մտածողության ձևավորման վրա, միջառարկայական կապերը որպես միջոց «Տեխնոլոգիա» առարկայի դասն առավել արդյունավետ և ակտիվ անցկացնելու համար:

Բացահայտվել է ՏՀՏ-ների կիրառման հնարավորությունները, կիրառման ընթացքում առկա դժվարությունները, ինչպես նաև նրանց ազդեցությունը ինժեներական մտածողության ձևավորման և զարգացման գործում:

Արդյունքում հիմնավորվում է այն մոտեցումը, որ Տեխնոլոգիա առարկայի ուսուցման գործընթացը առավել արդյունավետ է ժամանակակից ստեղծարար մեթոդների, միջոցների՝ ՏՀՏ-ներ, միջառարկայական կապեր, դասագրքեր, կիրառման միջոցով:

Ատենախոսության երրորդ գլուխը՝ «Ինժեներական մտածողության ձևավորմանը նպաստող մեթոդական համկարագի փորձարարական հետազոտությունը», բաղկացած է երեք ենթագլից.

- «Ինժեներական մտածողության ձևավորման և զարգացման մեթոդական համկարգը»,
- ««Տեխնոլոգիա» առարկայի դասավանդման գործընթացում ժամանակակից մեթոդների կիրառմամբ փորձարարական ուսուցման կազմակերպումը»,
- «Ինժեներական մտածողության ձևավորմանն ուղղված առաջարկվող մեթոդական համկարգի փորձարարական հիմնավորումը և արդյունքների վերլուծությունը»:

Այս գլխում հաշվի առնելով 5-7-րդ դասարանների սովորողների տարիքային առանձնահատկությունները, «Տեխնոլոգիա» առարկայի բովանդակությունն ու առարկայի ուսուցման ավարտին սովորողներին ներկայացվող պահանջները, որոշարկվել և մշակվել է ինժեներական մտածողության բաղադրիչների գնահատման չափանիշները երեք մակարդակով:

Տեխնիկական մտածողություն - *Ցածր մակարդակ*՝ չի տիրապետում տեխնիկական օբյեկտի կառուցվածքին և աշատանքային սկզբունքներին, չի գիտակցում իր ստացած տեսական գիտելիքների և գործնական հմտությունների կարևորությունը իր հետագա զարգացման համար, դժվարությամբ է անցնում գործունեության մի տեսակից մյուսը:

Միջին մակարդակ՝ տիրապետում է կառուցվածքին, սակայն չի կարողանում իրականացնել գործողություններ տեխնիկական օբյեկտների հետ, գիտակցում է ստացած գիտելիքների կարևորությունը, օգնություն է խնդրում անսովոր իրավիճակներում կողմնորոշվելու համար, դանդաղ է անցնում գործունեության մի տեսակից մյուսը:

Բարձր մակարդակ՝ լիարժեք տիրապետում, ղեկավարում և գործարկում է տեխնիկական օբյեկտները, գիտակցում է ստացած գիտելիքների կարևորությունը, հեշտությամբ կողմնորոշվում է անսովոր իրավիճակներում, արագ անցնում է գործունեության մի տեսակից մյուսը:

Կառուցողական մտածողություն - *Ցածր մակարդակ*՝ չի կարողանում ստեղծել առաջադրված խնդրի լուծման որոշակի համակարգ, բացակայում են օրիգինալ գաղափարներ, չի գիտակցում սեփական ներուժի ազդեցությունը հետազոտական գործունեության մեջ:

Միջին մակարդակ՝ կարողանում է կազմել խնդրի լուծման համակարգ, սակայն չի կարողանում իրականացնել քայլերի ճիշտ հաջորդականությունը, ունի որոշակի յուրօրինակ գաղափարներ, մասնակի գիտակցում է անձնական ներուժի ազդեցությունը հետազոտական աշխատանքներում:

Բարձր մակարդակ՝ կազմում է խնդրի լուծման մոդելը, լիարժեք իրականացնում է լուծման քայլարշավը, դրսևորում է ստեղծագործական նախաձեռնողականություն, գիտակցում է իր ազդեցությունը հետազոտական աշխատանքների արդյունքի վրա:

Հետազոտական մտածողություն - *Ցածր մակարդակ*՝ չի կարողանում առաջադրել նպատակներ, իրականացնել աղբյուրների վերլուծություն, նպատակին հասնելու համար օգնության կարիք է զգում, չի կարողանում աշխատանքը հասցնել ավարտին:

Միջին մակարդակ՝ նպատակներ սահմանելիս օգնության կարիք է զգում, նպատակին հասնելու ուղիները լիարժեք չի իրականացնում, սակայն աշխատանքը կարողանում է հասցնել ավարտին:

Բարձր մակարդակ՝ կարողանալ դնել նպատակներ, բացահայտել նորույթը խնդրի մեջ, վերլուծել համապատասխան աղբյուրներ, մշակել նպատակին հասնելու համար ուղիներ և իրականացնել եզրահանգումներ:

Տնտեսագիտական մտածողություն - *Ցածր մակարդակ*՝ իր կատարած աշխատանքի որակը չի կարողանում վերահսկել, չի կարողանում հաշվարկել նյութական ծախսը, իրականացնել ռեսուրսատնտեսում:

Միջին մակարդակ՝ ստեղծում է լավ որակի աշխատանքներ, որոնք համապատասխանում են շուկայական պահանջներին, մասնակիորեն տիրապետում է նյութական միջոցների կառավարմանը:

Բարձր մակարդակ՝ կարողանում է կատարել որակյալ աշխատանք, միննույն ժամանակ կարողանում է օպտիմալ օգտագործել նյութական միջոցները:

Այնուհետև հայտորոշիչ թեստավորման միջոցով բացահայտվել է սովորողների մնացորդային գիտելիքների և ինժեներական մտածողության առկա մակարդակը՝ մինչ փորձարարական ուսուցումն իրականացնելը:

Հաշվի առնելով ինժեներական մտածողության առանձնահատկությունները, մեթոդաբանական հիմքերը և բովանդակությունը ընտրության սկզբունքները մշակվել է

ժամանակակից մեթոդների և տեխնոլոգիաների կիրառմամբ ինժեներական մտածողության ձևավորման և զարգացման մոդելը:

Մշակված մոդելի կառուցվածքային բաղադրիչները (մեթոդաբանական հիմքերը, առանձնահատկությունները, նպատակը, խնդիրները, ուսուցման սկզբունքները, մանկավարժական պայմանները, ուսուցչի մասնագիտական կոմպետենցիաները, կիրառվող մեթոդները, միջոցները, տեխնոլոգիաները և ակնկալվող վերջնարդյունքը) բացահայտում են դպրոցականների ինժեներական մտածողության զարգացման արդյունավետությանն ուղղված մանկավարժական գործունեության ներքին կապերը:

Մոդելի նպատակն է՝ «Տեխնոլոգիա» առարկայի ուսուցման գործընթացում սովորողների ինժեներական մտածողության ձևավորումն ու զարգացումը ժամանակակից մեթոդների և տեխնոլոգիաների կիրառման միջոցով:

Մոդելի կարևորագույն բաղադրիչներից է մեթոդական բաղադրիչը, որի ենթաբաղադրիչներն են հանդիսանում ուսուցման մեթոդները, տեխնոլոգիաներն ու միջոցները, որոնց արդյունավետ կիրառումը ենթադրում է սովորողների ակտիվ ճանաչողական գործունեության իրականացում, որն արտահայտվում է ինքնուրույն մտածելու կարողությամբ, ներքին պատասխանատվությամբ, նախաձեռնողականությամբ, ճկունությամբ և իքնավերլուծությամբ:

Մոդելը նախապես մշակվել, ապա իրականացվել է Արմեն Հովհաննիսյանի անվան 194 հիմնական դպրոցում 5-7-րդ դասարաններում, որից հետո արդյունքների վերլուծության հիման վրա կրկին վերամշակվել է:

Մոդելն իրականացվել է «Տեխնոլոգիա» առարկայի դասավանդման գործընթացում:

Մանրամասն նկարագրվել և վերլուծվել է փորձարարական աշխատանքի ընթացքը: Փորձարարական ուսուցման ընթացքում դասավանդումն իրականացվել է մշակված մեթոդական համակարգի կիրառմամբ, որի ընթացքում ներդրվել և տեղայնացվել է ուսուցման ժամանակակից մեթոդներ, միջոցներ և տեխնոլոգիաներ:

Ներկայացվել է ուսումնական գործընթացում մեթոդական համակարգի ներդրման արդյունավետությունը՝ վերլուծելով և ներկայացնելով սովորողների ինժեներական մտածողության մակարդակի փոփոխությունը փորձարարական ուսուցումից առաջ և հետո:

Շնորհակալություն ուշադրության համար:

Ատենախոսին տրվեցին հարցեր, որոնց նա պատասխանեց ըստ էության:

Տեխ.գիտ.թեկն., դոցենտ Բ.Խողերյան: Ի՞նչպես նշեցիք սովորողների ինժեներական մտածողության մակարդակը և մնացորդային գիտելիքները բացահայտելու համար կիրառել եք թեստեր: Ի՞նչ թեստեր եք կիրառել:

Պատասխան /ատենախոս/: Սովորողների ինժեներական մտածողության և մնացորդային գիտելիքների մակարդակը պարզելու համար կիրառվել են համապատասխանաբար Բեննետի թեստը և տեխնիկական հասկացության թեստերը:

Ֆիզ. Մաթ. գիտ. թեկ., մանկ.գիտ.դոկտոր, պրոֆեսոր Հ. Միքայելյան: Դիտարկվե՞լ է ինժեներական մտածողության առանձնահատկությունները մտածողության այլ տեսակների, մասնավորապես տրամաբանական մտածողության, մաթեմատիկական մտածողության, պատկերային մտածողության առանձնահատկությունների հետ ինչ փոխհարաբերության մեջ է:

Պատասխան /ատենախոս/: Հետազոտության շրջանակներում ինժեներական մտածողության փոխհարաբերությունները մտածողության այլ նշված տեսակների հետ չեն դիտարկվել: Դիտարկվել է միայն քննադատական մտածողության հետ նմանությունը և տարբերությունը, ինչպես նաև ինժեներական մտածողության բաղադրիչ կազմող տեխնիկական, կառուցողական, հետազոտական և տնտեսագիտական մտածողությունների դրսևորման բնույթը:

Ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Գ.Ռ.Ղուլազարյան: Դուք նշեցիք, որ ինժեներական մտածողությունը կազմված է չորս բաղադրիչներից և ինժեներական մտածողությունը սահամնել էք այդ չորս բաղադրիչներով: Դուք բացահայտե՞լ եք այդ բաղադրիչներից յուրաքանչյուրի սահամնումը:

Պատասխան /ատենախոս/: Հետազոտության ընթացքում բացահայտելով, որ ինժեներական մտածողությունը բաղկացած է չորս բաղադրիչներից՝ տեխնիկական, կառուցողական, հետազոտական և տնտեսագիտական, ուսումնասիրել ենք ինչպես բուն ինժեներական մտածողությանը տրվող սահամնումները, այնպես էլ նրա առանձին բաղադրիչներին տրվող սահամնումները:

Տեխնիկական մտածողությունը սահամնվում է որպես (ըստ Տ. Վ. Կուդրյավցևի) ինտելեկտուալ գործընթացների և դրանց արդյունքների ամբողջություն, որը լուծում է տեխնիկական գործունեության հետ կապված խնդիրներին: Տեխնիկական մտածողությունը իր հերթին կազմված է երեք բաղադրիչներից՝ հասկացություն, պատկեր և գործողություն:

Կառուցողական մտածողությանը բնորոշ առանձնահատկությունն է կենտրոնացումը որոշակի իրողությունների դրական փոփոխության, ինչպես նաև առաջարկվող վերափոխումների ուղիների և միջոցների մշակման և հիմնավորման վրա՝ առաջ քաշելով

արդյունավետ գաղափարներ, որոնք կարող են հիմք հանդիսանալ առաջադեմ փոփոխությունների համար:

Հետազոտական մտածողությունը՝ խնդրի մեջ նորության սահմանումն է, իրենց գործողությունները փաստարկելու, ստացված արդյունքների հիման վրա եզրակացություններ անելու կարողությունն է:

Տնտեսագիտական մտածողությունը տնտեսական գիտակցության գործունեություն է, որն ուղղված է տնտեսական հարաբերությունների, կարիքների և շահերի, ընդհանուր առմամբ տնտեսական իրականության և դրա փոխակերպման ըմբռնմանը և արտացոլմանը, այն տնտեսական վարքագծի դրսևորումն է գործնական գործունեության ընթացքում:

Բաղադրիչներից յուրաքանչյուրն իր սերտ ազդեցությունն ունի ինժեներական մտածողության ձևավորման վրա: Այսպես օրինակ տեխնիկական մտածողությունը, իր հերթին կազմված լինելով հասկացությունից, պատկերից և գործողությունից, ձևավորվում է տարբեր տեսակի տեխնիկական օբյեկտների հետ աշխատանքների ընթացքում և արտադրատեխնիկական խնդիրների լուծման ընթացքում:

Տնտեսագիտական մտածողության դեպքում կարևորվում է նյութական ծախսի, շահութաբերության հաշվարկը, նվազագույն գնով առավելագույն արդյունքի հասնելու կարողությունը:

Ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Գ.Ռ.Ղուլդազարյան: Կարո՞ղ ենք ասել, որ հստակ սահմանում չկա ինժեներական մտածողության վերաբերյալ:

Պատասխան /ատենախոս/: Կան մի շարք սահմանումներ ինժեներական մտածողության վերաբերյալ, սակայն այդ բոլոր սահմանումները ուղղված են բացահայտելու մարդ- տեխնիկա փոխահարաբերությունը և բավարարելու մարդկանց տեխնիկական պահանջմունքները: Բոլոր ներկայացված սահմանումները չեն ընդգրկում հանրկրթական դպրոցի սովորողների ինժեներական մտածողության ձևավորումը և զարգացումը: Հետևաբար անհրաժեշտություն է առաջանում նորովի սահմանել «ինժեներական մտածողություն» հասկացությունը, որն իր մեջ կարտացոլի նաև հանրակրթական դպրոցի աշակերտների մտածողության ձևավորումը՝ ուղղված տեխնիկական և ստեղծագործական կարողությունների զարգացմանը:

Ֆիզ. Մաթ. գիտ. թեկ., մանկ.գիտ.դոկտոր, պրոֆեսոր Հ. Միքայելյան: Թույլ տվեք ևս մեկ հարց ուղեղ ատենախոսին: «Ինժեներական մտածողություն» հասկացության մասին ուսումնասիրություններ իրականացրել էք հոգեբանական գրականության մեջ:

Պատասխան /ատենախոս/: Այո, ինժեներական մտածողության հիմնախնդիրը դիտարկվել է հոգեբանա- մանկավարժներ Ջ.Դյուիի, Վ.Վ.Դավիդովի, Ե.Ա.Դուսայի, Ջ.Ս.Սազոնովայի, Ն.Վ.Չեչեռնոկինայի, Ի.Ա.Ջիմնայայի, Յա.Ա.Պոնոմարևի, Տ.Վ.Կուրյավցևի, Բ.Ֆ.Լոմովի, Վ.Ա.Սոլյակոյի, Ս.Վ. Կոմարովի և այլոց հետազոտություններում:

Տեխ.գիտ.թեկն., դոցենտ Բ.Խողերյան: Խնդրում եմ ներկայացնել նաև այն գործնական աշխատանքները, որոնք ռեալ ազդեցություն են ունենում ինժեներական մտածողության ձևավորման և զարգացման վրա:

Պատասխան /ատենախոս/: Փորձարարական ուսուցման ընթացքում շեշտն առավելապես դրվել է գործնական աշխատանքների իրականացմանը, որն անցկացում էր թե անահատական, թե խմբային ձևերով՝ կիրառելով ստեղծարար մեթոդներ, որոնք ապահովում են տեսության և պրակտիկայի միջև կապը: Ըստ այդմ ինժեներական մտածողության ձևավորման վրա գործուն ազդեցություն են ունենում որևէ կոնստրուկցիայի քանդել հավաքելը, կամ նոր լուծում տալը, թափոնների ստեղծագործարար օգտագործումը, գրաֆիկական նախագծերի իրականացումը, ձեռքի տակ եղած նյութերով իրերի, կոնստրուկցիաների պատրաստումը և փորձարկումը և այլն:

Ֆիզ.մաթ. գիտ. դոկտոր, պրոֆ. պաշտոն. Գ.Գ.Դեմիրխանյանը: Ո՞ր դպրոցում էր իրականացրել փորձարարական հետազոտությունը:

Պատասխան /ատենախոս/: Փորձարարական հետազոտությունն իրականացրել ենք Երևանի Արմեն Հովհաննիսյանի անվան հ. 194 հիմնական դպրոցում, ընդգրկելով 5, 6, 7- րդ դասարանների աշակերտներին՝ փորձարարական և ստուգողական խմբերի բաժանելով: Առաջարկված մեթոդներով դասընթացներ են իրականացվել Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի թիվ 57 հիմնական դպրոցում, Երևանի Մովսես Ջամբազյանի անվան թիվ 79 հիմնական դպրոցում և Խրիմյան Հայրիկի անվան թիվ 10 դպրոցում:

Ֆիզ.մաթ. գիտ. դոկտոր, պրոֆ. պաշտոն. Գ.Գ.Դեմիրխանյանը: Եվս մեկ հարց, ձեր կողմից իրականացրած փորձարարական հետազոտության արդյունքները արտացոլված են համապատասխան հոդվածներում և որտե՞ղ են տպագրված:

Պատասխան /ատենախոս/: Մեր կողմից իրականացրած փորձարարական հետազոտության արդյունքներն արտացոլված են թվով 12 գիտական հոդվածներում, որոնք տպագրվել են ՀՀ ԲՈԿ-ի կողմից երաշխավորված պարբերականներում, ինչպես նաև թվով 3 հոդված ռուսական պարբերականներում: Ունենք ևս մեկ հոդված, որը ընդունված է տպագրության:

Տեխ.գիտ.դոկտոր, պրոֆեսոր Ա.Ի.Սահրադյանը - Հարգելի գործընկերներ, այժմ ձայն տանք ընդդիմախոսներին ատենախոսության վերաբերյալ կարծիքները ներկայացնելու համար:

Գրախոս՝ Մանկավարժության ամբիոնի դոցենտ՝ մանկ. գիտ. թեկն. Գ.Ն. Հարությունյան

Ժամանակակից տեղեկատվական հասարակությունն ունի համակարգային գիտելիքներով և այդ գիտելիքները գործնականում կիրառելու կարողությամբ բանիմաց մարդկանց պահանջարկ: Մեր օրերում տեղի ունեցող փոփոխությունների համատեքստում կարևորվում է սովորողների ինժեներական մտածողության զարգացումն ու ձևավորումը, քանի որ ինժեներական մտածողություն ունեցող մարդը կարող է ոչ միայն իր արժանի տեղն ապահովել հասարակության մեջ, այլև նպաստել նրա առաջընթացին: Ինժեներական մտածողության հիմքերը դրվում են հանրկրթական դպրոցի «Տեխնոլոգիա» առարկայի դասաժամերին, ինչպես նաև ինժեներական լաբորատորիաներում, իսկ մտածողության հետագա զարգացումը մեծապես կախված է տեխնոլոգիա առարկան դասավանդող ուսուցչի մասնագիտական կոմպետենցիաներից ու պատրաստվածության մակարդակից:

Ա. Հակոբյանի թեկնածուական ատենախոսությունը նվիրված է սույն խնդրի վերլուծությանն ու պարզաբանմանը, ինչպես նաև սովորողների ինժեներական մտածողության ձևավորման արդյունավետությանն ուղղված մեթոդական համակարգի առաջադրմանը:

Ատենախոսությունը կազմված է ներածությունից, 3 գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից:

Ատենախոսության ներածության մեջ հիմնավորվում է հետազոտության թեմայի արդիականությունն ու մշակվածության աստիճանը, ներկայացված են հետազոտության նպատակը, խնդիրները, օբյեկտն ու առարկան, հետազոտության մեթոդները, գիտական վարկածն ու նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, պաշտպանության ներկայացվող դրույթները, հետազոտության փորձարարական բազան, աշխատանքի ծավալն ու կառուցվածքը:

Ա.Հակոբյանը իր ատենախոսության առաջին գլխում անդրադարձել է ինժեներական մտածողության ձևավորման տեսական հիմքերը: Այս գլխում խորությամբ ուսումնասիրել ու վերլուծության է ենթարկել սովորողների ինժեներական մտածողության ձևավորման հայեցակարգային մոտեցումներն ու ներկայացրել ինժեներական մտածողության կառուցվածքն ու բաղադրիչները:

Ատենախոսության երկրորդ՝ «Ինժեներական մտածողության ձևավորման արդյունավետ ուղիները հիմնական դպրոցի «Տեխնոլոգիա» առարկայի ուսուցման գործընթացում» խորագիրը կրող գլխում Ա.Հակոբյանը մանրամասն ներկայացրել է ինժեներական մտածողության ձևավորման ու զարգացման մեթոդական մոտեցումները: Ատենախոսը սովորողների ինժեներական մտածողության ձևավորման և զարգացման գործում մեծապես կարևորել է

միջառարկայական կապերի ապահովման, ինչպես նաև հիմնական դպրոցում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառման դերն ու նշանակությունը:

Ատենախոսության երրորդ գլուխը նվիրված է հիմնական դպրոցում ինժեներական մտածողության ձևավորման փորձարարական հետազոտության արդյունքների վերլուծությանը: Այս գլխում հանգամանորեն ներկայացված են ատենախոսի կողմից իրականացված հետազոտական աշխատանքների ընթացքն ու արդյունքները: Մանսավորապես թեստավորման միջոցով ստուգվել են սովորողների մնացորդային գիտելիքները «Տեխնոլոգիա» առարկայից, ինչպես նաև որոշվել է սովորողների ինժեներական մտածողության մակարդակը: Ատենախոսը ներկայացրել է նաև իր կողմից մշակված «Տեխնոլոգիա» առարկայի ուսուցման գործընթացի կազմակերպման մոդելն՝ ուղղված սովորողների ինժեներական մտածողության ձևավորմանը, ինչպես նաև մոդելի փորձարարական հիմնավորումն ու ստացված արդյունքների վերլուծությունը: Հետազոտության արդյունքները ենթարկվել են լուրջ գիտական վերլուծության:

Ատենախոսն իր առջև դրել է խնդիրներ, որոնք իրենց լուծումներն են ստացել ատենախոսության համապատասխան գլուխներում և ենթաօլուխներում:

Ատենախոսությունն ունի տրամաբանական կուռ կառուցվածք, շարադրված է գրագետ, հարցերը լուսաբանված են խորությամբ, եզրակացություններն արված են ինքնուրույն՝ տեսական ուսումնասիրությունների և փորձարարական հետազոտությունների հիման վրա: Ատենախոսն օգտագործել է հարուստ գրականություն:

Այնուհանդերձ ատենախոսությունը զերծ չէ նաև որոշ թերություններից.

1. Ատենախոսության ներածության մեջ հետազոտության գիտական նորույթի 3-րդ կետը վերաձևակերպման կարիք ունի:
2. Ատենախոսության ներածության մեջ ներկայացված էմպիրիկ մեթոդների մեջ պետք չէ նշել նորարարական մեթոդների մասին:
3. Ատենախոսության մեջ առկա են լեզվառճական որոշ անհարթություններ, ինչպես նաև համակարգչային բացթողումներ և վրիպումներ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Վերը նշված թերացումները չեն նսեմացնում ատենախոսության արժեքը:

Աննա Սամվելի Հակոբյանի «Ինժեներական մտածողության ձևավորման առանձնահատկությունները հիմնական դպրոցի «Տեխնոլոգիա» առարկայի ուսուցման գործընթացում» խորագրով թեկնածուական ատենախոսությունն ավարտուն, ինքնուրույն

գիտական աշխատանք է: Ատենախոսությունը կարելի է երաշխավորել հրապարակային պաշտպանության:

Ա.Հակոբյան /ատենախոս/: Շնորհակալություն դոցենտ Հարությունյան դիտարկումների և առաջարկությունների համար: Ձեր կողմից նշված դիտարկումները և առկա վրիպումները սեղմ ժամկետում կշտկենք:

Գրախոս՝ Մանկավարժության ամբիոնի դոցենտ՝ մանկ. գիտ. թեկն. Լ.Հ. Նազարյան

Աննա Հակոբյանի ատենախոսությունը նվիրված է ինժեներական մտածողությամբ ձևավորման և զարգացման խնդրի վերլուծությանն ու պարզաբանմանը, ինչպես նաև սովորողների ինժեներական մտածողության ձևավորման արդյունավետությանն ուղղված մեթոդական համակարգի առաջադրմանը: Հայցորդ Աննա Սամվելի Հակոբյանն ընդունել էր ավելի վաղ մեր կողմից ներկայացված դիտողությունները և սեղմ ժամկետում կատարել համապատասխան փոփոխություններ, որոնք աշխատանքը դարձրել են ամբողջական և ինքնուրույն: Մասնավորապես.

1. Իրականացված հետազոտության շրջանակներից առանձնացվել և հստակ ներկայացվել է հիմնական դպրոցի «Տեխնոլոգիա» առարկայի այն չափորոշիչային պահանջներն ու ելքային վերջնարդյունքներն, որոնց հիման վրա ընտրվել էր մանկավարժական փորձարարության թեմատիկան:
2. Վերանայվել է «Տեխնոլոգիա» առարկայի առաջադրված մոդելն, այն ձևակերպվել է հստակ և առարկայական, բաղկացած իրական և ձափելի գործոններից:
3. Առավել ակնառու են նկարագրվել հետազոտության ապացուցողական բազան և կիրառված մեթոդների ընտրության հիմնավորվածությունը:
4. Ներկայացվել է մեթոդական համալիրի ներդրման ընթացքն, որը կարող է հավաստել ներդրված մոդելի արդյունավետության մասին:

Աննա Սամվելի Հակոբյանի «Ինժեներական մտածողության ձևավորման առանձնահատկությունները հիմնական դպրոցի «Տեխնոլոգիա» առարկայի ուսուցման գործընթացում» խորագրով թեկնածուական ատենախոսությունը կարելի է երաշխավորել հրապարակային պաշտպանության:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Նշված նկատառումները չեն իջեցնում գիտահետազոտական աշխատանքի արժեքը, այն ամբողջական, յուրովի, հստակ ձևակերպումներով և ինքնուրույն կատարված հետազոտական աշխատանք է և կարող է երաշխավորվել հրապարակային պաշտպանության:

Ա. Հակոբյան /ատենախոս/: Շնորհակալություն պարոն Նազարյան դիտարկումների համար:

Արտահայտվեցին՝

Տեխ. գիտ. թեկն. , դոցենտ Խողերյան Բ.: Ծանոթ լինելով թեմային, ուզում եմ նշել, որ այն բավականին արդիական է, հետազոտական աշխատանքը շատ հետաքրքիր է, բովանդակալից: Աննան խորապես ուսումնասիրել է հիմնախնդիրը և առաջադրել համապատասխան լուծումներ: Ցանկալի է սահիկներում տեսնել Բեննետի թեստի որոշ հարցեր, որպեսզի ովքեր ծանոթ չեն թեստին կարողանան ընդհանուր պատկերացում կազմել թեստի բնույթի մասին: Նշեմ նաև, որ Աննան իսկապես ունի բարձր մասնագիտական պատրաստվածություն, աշխատասեր է, պարտաճանաչ: Առաջարկում եմ աշխատանքը երաշխավորել հրապարակային պաշտպանության:

Տիգ. մաթ. գիտ. թեկ., մանկ.գիտ.դոկտոր, պրոֆեսոր Հ.Ս.Միքայելյանը: Իրապես, բավականին հետաքրքիր է աշխատանքը: Կուզնայի, որ հայցորդն առավել մանրամասն ներկայացնեք ինժեներական մտածողության հոգեբանական մոտեցումները և փոխհարաբերությունները մտածողության այլ տեսակների հետ: Մինևույն ժամանակ աշխատանքում խորապես վերլուծված էր ինժեներական մտածողության ձևավորումը մանկավարժական տեսանկյունից: Հետաքրքիր էին նաև առաջարկված մեթոդները, որոնք այսօր ցավալիորեն չեն կիրառվում դասավանդողների կողմից: Ես նույնպես առաջարկում եմ երաշխավորել Աննայի աշխատանքը հրապարակային պաշտպանության:

Տիգմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Գ.Ռ.Ղուլազարյանը: Իսկապես շատ հիմնավոր էին պատասխաններն ու պնդումները, համոզված եմ, որ հայցորդն ունի դրանց հետազոտական հիմքը: Աշխատանքի վերաբերյալ կարծիքս դրական է: Առաջարկում եմ երաշխավորել այն հրապարակային պաշտպանության:

Մանկ. գիտ. թեկն., դոցենտ Կ.Հ.Աղաբաբյանը: Չնայած իմ ուսումնասիրությունների տիրույթը առավելապես լեզվամտածողությունն է, սակայն ինձ հետաքրքիր էր լսել ինժեներական մտածողության մասին վերլուծությունները, քանի որ ինժեների մասնագիտությունը պահանջված է եղել սկսած Հին Հռոմից մինչև մեր օրեր: Կարծում եմ, որ բարձրաձայնված դիտարկումները հաշվի կառնվեն ատենախոսի կողմից և առաջարկում եմ աշխատանքը երաշխավորել հրապարակային պաշտպանության:

Տեխ. գիտ. թեկն. , դոցենտ Օրդյան Ն. : Աննային ճանաչում եմ վաղուց: Մեր ուսանողն է եղել: Իսկապես շատ լավ աշխատանք է կատարել: Հետաքրքիր, բովանդակալից աշխատանք էր: Ելնելով 21-րդ դարի մարտահրավերներից և ՀՀ Հանրակրթության մասին օրենքում ամրագրված

ութ կարողունակություններից՝ բավականին արդիական է ուսումնասիրված թեման: Համամիտ եմ գործընկերներիս դիտարկումների հետ: Առաջարկում եմ աշխատանքը երաշխավորել հրապարակային պաշտպանության:

Տեխ. գիտ. թեկն. , դոցենտ Վարդանյան Ս: Վաղուց գիտեմ Աննային, քանի որ դասավանդել եմ դեռևս բակալավրիատում: Համարձակ թեմա է, չկրկնվող: Կարծում եմ, որ շատ բաներ կային աշխատանքում, որոնք չներկայացվեցին: Հատկապես փորձարարական դասերի վերաբերյալ տեղեկատվությունը բացակայում էին սահիկներում: Այդուհանդերձ առաջարկում եմ աշխատանքը երաշխավորել հրապարակային պաշտպանության:

Դոցենտ Հարությունյան Ա.: Աշխատանքը բավականին հետաքրքիր է: Կարծում եմ հետազոտության արդյունքները զգալի օգնություն կհանդիսանա «Տեխնոլոգիա» առարկան դասավանդող ուսուցիչների համար, քանի որ առաջարկված մեթոդական համակարգը դասապրոցեսը կդարձնի ավելի հետաքրքիր, ակտիվ և փոխներգործուն, կնպաստի սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորմանը: Ատենախոսի ներկայացումն առավել հետաքրքիր կլիներ, եթե սահիկներում ներկայացվեր դասապրոցեսի օրինակներ, գործնական աշխատանքում պատրաստված իրերի օրինակներ և աշխատանքային ձևեր: Աշխատանքն ամբողջական է, և ես նույնպես առաջարկում եմ երաշխավորել պաշտպանության:

Տեխ.գիտ.դոկտոր, պրոֆեսոր Ա.Բ.Սահրադյանը /նիստի նախագահ և ատենախոսության գիտական ղեկավար/- Հարգելի գործընկերներ, այժմ որպես հայցորդի գիտական ղեկավար թույլ տվեք մի քանի բառով ներկայացնեմ Աննային: Աննա սովորել է «Տեխնոլոգիա և ձեռնարկչություն» մասնագիտության բակալավրը և մագիստրատուրան գերազանց առաջադիմությամբ, մագիստրոսական թեզը նույնպես կատարել է իմ ղեկավարությամբ:

Աննան բարձր գիտական վերլուծական մտածողության և ստեղծագործական կարողության տեր անձնավորություն է: Շատ հետաքրքիր մոտեցումներ ունի՝ ստեղծագործական խնդիրներն առաջադրելու, տեխնիկական գործունեությունն իրականացնելու և նոր գաղափարներ առաջարկելու տեսանկյունից: Կարծում եմ՝ Աննա շատ լավ գիտնական կդառնա, և իրեն շատ լավ ապագա է սպասվում:

Շնորհակալություն ենք հայտնում դոցենտներ Գ. Հարությունյանին և Լ. Նազարյանին ատենախոսական աշխատանքը մանրամասն ուսումնասիրել և դիտողությունների համար, որոնք ուղղված են միայն աշխատանքն առավել ընկալելի դարձնելուն:



Այսպիսով, ելնելով ատենախոս Ա. Հակոբյանի պաշտպանական խոսքից, ընդդիմախոսների և մյուս ելույթ ունեցողների կարծիքներից և առաջարկություններից, իրեն

տրված հարցերին ատենախոսի պատասխաններից՝ կարող ենք նշել, որ ատենախոսությունը կուռ, ամբողջական գիտական հետազոտություն է, որն ունի գիտատեսական և գործնական մանկավարժական արժեք: Հետազոտության տվյալները հավաստի են, հեղինակի հրատարակած հոդվածներում լիարժեք ընդգրկված են հետազոտության արդյունքները, ուստի առաջարկում եմ ատենախոսությունը երաշխավորել հրապարակային պաշտպանության:

ՈՐՈՇԵՑԻՆ- 1. Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Տեխնոլոգիական կրթության ամբիոնի հայցորդ Աննա Սամվելի Հակոբյանի «Ինժեներական մտածողության ձևավորման առանձնահատկությունները հիմնական դպրոցի «Տեխնոլոգիա» առարկայի ուսուցման գործընթացում» խորագրով թեկնածուական ատենախոսությունը ավարտուն, ամբողջական, գիտագործնական նշանակություն ունեցող աշխատանք է, համապատասխանում է ՀՀ Գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին և ԺԳ.00.02 Դասավանդման և ուսուցման մեթոդիկա (Ընդհանուր տեխնիկական առարկաների դասավանդման մեթոդիկա) մասնագիտական թվանիշին:

2. Այն երաշխավորել հրապարակային պաշտպանության:

/Կողմ՝ 14, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Նիստի նախագահ՝		Ա.Բ. Սահրադյան
Քարտուղար՝		Ս.Ո. Վարդանյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ հ. 12
2023թ. մայիսի 10-ին կայացած Տեխնոլոգիական

կրթության ամբիոնի նիստի

Օրակարգում՝

1. Ուսումնական գործընթացների ընթացքն ամբիոնում:
2. Երկրորդ միջանկյալ ստուգման և ամփոփիչ քննության տոմսերի հաստատում:
3. Հեռակա 5-րդ կուրսի ավարտական աշխատանքների նախապաշտպանություն:
4. Ընթացիկ հարցեր:

Նիստին ներկա էին ամբիոնի թվով 9 անդամ և հեռակա 5-րդ կուրսի ուսանողները (ներկայաթերթը կցվում է):

Միաձայն հաստատվեց օրակարգը:

1. ԼՍԵՑԻՆ – Ուսումնական գործընթացների ընթացքն ամբիոնում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-1) Բ. Խողերյան-Ես դասավանդում եմ բակալավր 3-րդ և մագիստրատուրա 1-ին կուրսերում: Ուսանողները վերադարձել են իրենց պրակտիկաներից՝ 3-րդ կուրսում 6 շաբաթյա ուսումնական պրակտիկա, մագիստրատուրա 1-ին կուրսում 3 շաբաթյա մանկավարժահետազոտական պրակտիկա: Միաժամանակ աշխատում ենք նաև երկրորդ կուրսի մագիստրոս Պետրոսյան Համլետի և 4-րդ կուրսի ուսանող Հարությունյան Կարինեյի հետ:

2) Ս.Վարդանյան-Ես դասավանդում եմ առկա բակալավրիատի 2-րդ և 3-րդ և մագիստրատուրայի 1-ին կուրսում: Հաճախումները նորմալ են, դասապրոցեսը՝ նույնպես Առկա բակալավրիատի 4-րդ կուրսի ուսանող Նազարեթյան Շուշանի հետ աշխատում ենք ավարտական աշխատանքի վերջնական ձևավորման և նշված թերությունների վերացման վրա:

3) Ն.Օրդյան- Ես ավարտել եմ առկա ուսուցման իմ բոլոր դասախոսությունները: Նախապատրաստվում եմ ավարտական աշխատանքների պաշտպանությանը:

4) Ա.Հարությունյան-Այս կիսամյակում ես դասավանդում եմ բակալավր 3-րդ և մագիստրատուրա 1-ին կուրսում: Աշխատում եմ նաև Սարգսյան Կարինեի մագիստրոսական թեզի վերջնական ձևավորելու և նախապաշտպանության ժամանակ նշված թերությունները շտկելու վրա: Ամեն ինչ նորմալ է:

5)Տ.Այվազյան-Ես դասավանդում եմ 3-րդ բակալավրիատում և 1-ին մագիստրատուրայում: Դասընթացներն ընթանում են բնականոն հունով: Ամեն ինչ նորմալ է: Աշխատում եմ նաև մագիստրոսի հետ իր մագիստրոսական թեզի նշված թերությունները շտկելու վրա:

6)Ա.Սահրադյան-Այս կիսամյակում ես դասավանդում եմ բակալավրիատի 3-րդ կուրսում և մագիստրատուրա 1-ին կուրսում: Երկու կուրսերն էլ վերադարձել են ուսումնական և մանկավարժահետազոտական պրակտիկաներից և ուսումնական գործընթացներն ընթանում են բնականոն հունով:

Քննարկման արդյունքում

ՈՐՈՇԵՑԻՆ –Ուսումնական գործընթացների վիճակը համարել բավարար:

2. ԼՍԵՑԻՆ- Երկրորդ միջանկյալ ստուգման և ամփոփիչ քննության տոմսերի վերահաստատում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Վարդանյան Ս.- Երկրորդ միջանկյալ ստուգումը նախատեսված է 01.06.23-07.06.23թթ, իսկ ամփոփիչ ստուգումը՝ 08.06.23թ.-ից 28.06.23թ-ը: Դասախոսները ամբիոնի վերահաստատման են ներկայացրել երկրորդ միջանկյալ և ամփոփիչ ստուգման տոմսերը: Առաջարկում եմ հաստատել այսօրվա ամսաթվով՝ 10.05.23թ.:

Քննարկման արդյունքում

ՈՐՈՇԵՑԻՆ-Երկրորդ միջանկյալ ստուգման և ամփոփիչ քննության տոմսերի վերահաստատել այսօրվա ամսաթվով՝ 10.05.23թ.:

3. ԼՍԵՑԻՆ- Հեռակա 5-րդ կուրսի ավարտական աշխատանքների նախապաշտպանություն:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Սահրադյան Ա.- Այսօր տեղի է ունենալու հեռակա 5-րդ կուրսի ավարտական աշխատանքների նախապաշտպանությունը: Լսենք նրանց զեկուցումները ավարտական աշխատանքների վերաբերյալ:

1) Արիստակեսյան Նելլի - Ավարտական աշխատանքի թեման է «Գազային եռակցման առանձնահատկությունները և կիրառման բնագավառները» թեմայի դասավանդումը նախնական մասնագիտական ուսումնական հաստատություններում: Ավարտական աշխատանքը կատարում է տեխ.գիտ.դոկտոր, պրոֆեսոր Ա.Բ.Սահրադյանի ղեկավարությամբ:

Ն.Արիստակեսյանը աշխատանքում ներկայացրել է եռակցման տեսակները, գազային եռակցման նշանակությունը, կատարման տեխնոլոգիան և անհրաժեշտ սարքերն ու սարքավորումները: Մշակել է դասի պլան նախնական մասնագիտական ուսումնական հաստատություններում «Գազային եռակցման առանձնահատկությունները և կիրառման բնագավառները» թեմայի դասավանդման համար:

2) Գալստյան Անի- Ավարտական աշխատանքի թեման է «Բանջարեղենով կերակրատեսակների պատրաստում» թեմայի դասավանդման առանձնահատկությունները միջին դպրոցում: Ղեկավարն՝ տեխ.գիտ.թեկն., դոցենտ Բ.Ա.Խոդերյանը:

Ա.Գալստյանը վեր հանել բանջարեղենի սննդարար նշանակությունը և բանջարեղենից տարբեր կերակրատեսակների պատրաստման տեխնոլոգիաները: Ներկայացրել է ազգային կերակրատեսակների, որտեղ կիրառվում են բանջարեղեններ: Ավարտական աշխատանքում կատարված է մեծածավալ վերլուծական աշխատանք բանջարեղենների վերաբերյալ:

3) Մելքումյան Քրիստինե - Ավարտական աշխատանքի թեման է «Հագուստի և ազգային տարազի պատմություն» թեմայի դասավանդման առանձնահատկությունները միջին դպրոցում: Ավարտական աշխատանքն իրականացնում է տեխ.գիտ.թեկն., դոցենտ Բ.Ա.Խոդերյանի ղեկավարությամբ:

Ք.Մելքումյանը ուսումնասիրել է հագուստի և հայկական տարազի վերաբերյալ մասնագիտական և տեղեկատվական գրականությունը, վերլուծել է հայկական ազգային

տարազի առանձնահատկությունները ըստ աշխարհագրական վայրերի, մշակել է ինտերակտիվ դասեր թեմայի վերաբերյալ, կիրառելով S2S-ներ և ակտիվացնող ուսուցման մեթոդներ:

4) Ղահրամանյան Գաբրիել - Ավարտական աշխատանքի թեման է «Անտառանյութերի մշակման ժամանակակից տեխնոլոգիաներ» թեմայի դասավանդման առանձնահատկությունները, աշխատանքի ղեկավարն է տեխ.գիտ.թեկն., դոցենտ Բ.Ա.Խոդերյանը:

Գ.Ղահրամանյանը ուսումնասիրել է արդյունաբերական նշանակություն ունեցող անտառանյութերի և դրանց մշակման տեխնոլոգիաների վերաբերյալ մասնագիտական և տեղեկատվական գրականությունը, ուսումնասիրել է արդյունաբերական նշանակություն ունեցող անտառանյութերի տեսակները և բնութագրերը, վերլուծել է սղոցանյութերի տեսականին և ստացման տեխնոլոգիաները և ներկայացրել «Անտառանյութերի մշակման ժամանակակից տեխնոլոգիաներ» թեմայի դասավանդումը ակտիվ կրթական մեթոդներով:

5) Նոսաչենկո Ջուլիետա – Ավարտական աշխատանքի թեման է «Մտով կամ ձկով առաջին և երկրորդ կերակրատեսակների պատրաստում» թեմայի դասավանդումը ակտիվացնող կրթական մեթոդներով, աշխատանքի ղեկավարն է տեխ.գիտ.թեկն., դոցենտ Բ.Ա.Խոդերյանը:

Ջ.Նոսաչենկոն ուսումնասիրել է մսի և ձկնեղենի տեսականին վերաբերվող մասնագիտական և տեղեկատվական գրականությունը, ներկայացրել է մսի և ձկան նշանակությունը մարդու սննդակարգում, ներկայացրել է մսամթերքից և ձկնեղենից առաջին և երկրորդ կերակրատեսակների պատրաստման տեխնոլոգիաները, պատրաստել է ինտերակտիվ դասեր մսից և ձկներից կերակրատեսակների պատրաստման տեխնոլոգիաների վերաբերյալ:

6) Գևորգյան Դիանա – Ավարտական աշխատանքի թեման է «Տրանսֆորմատորների աշխատանքային սկզբունքը, նրանց տիպերը և կիրառման ոլորտները» թեմայի դասավանդման մեթոդիկան միջին մասնագիտական հաստատություններում: Ավարտական աշխատանքն իրականացնում է ֆիզ.մաթ.գիտ.թեկն., պրոֆ.պ. Տ.Մ.Այվազյանը:

Դ.Գևորգյանը ներկայացրեց տրանսֆորատորների աշխատանքի սկզբունքը, նրանց տիպերը, կիրառման ոլորտները: Ներկայացրեց նաև այն հիմնական ակտիվ և ինտերակտիվ ուսուցման մեթոդները, որոնք կիրառել է միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում, այս թեման դասավանդելու համար:

7) Սարգսյան Խաչիկ – Ավարտական աշխատանքի թեման է «Ավտոմատիզացիայի սարքավորումների շղթաներում օգտագործվող հիմնական տարրերի դերը և հատկությունները» թեմայի դասավանդման մեթոդիկան միջին մասնագիտական հաստատություններում, ղեկավարը՝ ֆիզ.մաթ.գիտ.թեկն., պրոֆ.պ. Տ.Մ.Այվազյանը:

Խ.Սարգսյանը ավտոմատիզացիայի սարքավորումների շղթաներում օգտագործվող հիմնական տարրերի դերը, նմանատիպ սարքավորումների կիրառումը: Ներկայացրեց այս թեմայի դասավանդման առանձնահատկությունը միջին մասնագիտական ուսումնական հաստատությունում, առանձնացնելով այն մեթոդները, որոնք առավել արդյունավետ են միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում դասավանդումն իրականացնելու համար:

8) Հայրապետյան Տաթևիկ –Ավարտական աշխատանքի թեման է «Փոփոխական հոսանքի շղթաների հաշվարկումը» թեմայի դասավանդման մեթոդիկան միջին մասնագիտական հաստատություններում, ղեկավարը՝ ֆիզ.մաթ.գիտ.թեկն., պրոֆ.պ. Տ.Մ.Այվազյանը:

Տ.Հայրապետյան ներկայացրեց փոփոխական հոսանքի շղթաների հաշվարկը, փոփոխական հոսանքի տեսակները՝ պարբերական փոփոխական հոսանք, փոփոխական սինուսոիդային հոսանք: Ներկայացրեց այս թեմայի դասավանդման մեթոդիկան միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում:

9) Խաչատրյան Մարիամ – Ավարտական աշխատանքի թեման է «Վերականգնվող էներգիայի տեսակները և այդ էներգիաների ստացման սարքավորումների կառուցվածքը և աշխատանքի սկզբունքը» թեմային դասավանդման մեթոդիկան միջին մասնագիտական հաստատություններում, ղեկավարը՝ ֆիզ.մաթ.գիտ.թեկն., պրոֆ.պ. Տ.Մ.Այվազյանը:

Մ.Խաչատրյանը ներկայացրեց վերականգնվող էներգիայի տեսակները, աղբյուրները, վերականգնվող էներգիայի ստացման սարքավորումների աշխատանքային

սկզբունքը: Անդրադարձավ նաև այն ուսուցման մեթոդներին, որոնք կիրառել է այս թեման միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում դասավանդելու համար:

10)Քալանթարյան Աստղիկ – Ավարտական աշխատանքի թեման է «Շինվածքների պատրաստման տեխնոլոգիական գործընթացը» թեմայի դասավանդման մեթոդիկական 5-րդ դասարանում, ղեկավարը՝ դոցենտ Ա.Հարությունյան:

Ա.Քալանթարյանը ներկայացրել է շինվածքների պատրաստման տեխնոլոգիական գործընթացը, ներկայացրել է այն ակտիվացնող մեթոդները և ուսումնական միջոցները, որոնք առավել արդյունավետ են այս թեմայի դասավանդման գործընթացում:

11)Մելիքսեթյան Սմբատ – Ավարտական աշխատանքի թեման է <<Նախագծի կատարման առանձնահատկությունները>> թեմայի դասավանդման մեթոդիկական 7-րդ դասարանում, ղեկավարը՝ դոցենտ Ա.Հարությունյան:

Ս.Մելիքսեթյանը ներկայացրեց նախագծերի կատարման առանձնահատկությունը, նախագծի քայլերը: Ցույց տվեց իր կողմից կիրառված մեթոդների արդյունավետությունը 7-րդ դասարանի աշակերտների հետ աշխատանքի ընթացքում:

12)Պողոսյան Եկատերինա -Ավարտական աշխատանքի թեման է «Մասնագիտության ընտրման կանոններ» թեմայի դասավանդման մեթոդիկական 7-րդ դասարանում, ղեկավարը՝ դոցենտ Հ.Հարությունյան:

Ե.Պողոսյանը ներկայացրեց մասնագիտական կողմնորոշման կարևորությունը, թվարկեց այն հիմնական կանոնները, որոնք անհրաժեշտ են մասնագիտության ընտրության համար:

13)Գալուստյան Մարիամ - Ավարտական աշխատանքի թեման է «Ձեռագործ զարդեր» արտադասարանական խմբակի դասավանդման մեթոդիկայի մշակում, ղեկավար՝ տեխ.գիտ.թեկն., դոցենտ Ն.Ա.Օրդյան:

Մ.Գալուստյանը ներկայացրեց ձեռագործ աշխատանքների արդիականությունը, տեսակները: Ներկայացրեց թե ինչքան կարևոր է երեխաների մանր մոտորիկական զարգացնելու և ներանց ստեղծագործական մտածելակերպը ձևավորելու գործում: Ներկայացրեց նաև արտադասարանական խմբակի դասավանդման մեթոդիկական՝ մշակված իր կողմից:

14) Գալոյան Լիանա – Ավարատական աշխատանքի թեման է «Թելից ձեռագործ աշխատանքների կատարումը տեխնոլոգիայի դասերին որպես սովորողների աշխատանքային հմտությունների զարգացման միջոց», ղեկավարն է տեխ.գիտ.թեկն., դոցենտ Ն.Ա.Օրոյանը:

Լ.Գալոյանը ներկայացրեց աշխատանքային հմտությունների ձևավորման կարևորությունը, ներկայացրեց թելից ձեռագործ աշխատանքների տեսակները, կատարման տեխնոլոգիան:

15) Լիանա Այվազյան – Ավարատական աշխատանքի թեման է Սովորողների ստեղծագործական կարողությունների զարգացումը «Թափոններից օգտակար իրեր» դիզայն - նախագծերի միջոցով» ղեկավարն է տեխ.գիտ.թեկն., դոցենտ Ն.Ա.Օրոյանը:

Լ.Այվազյանը իր աշխատանքում անդրադարձել էր տարբեր տեսակի թափոնների վերամշակմանը: Ներկայացրեց այդ թափոններից իրերի պատրաստման ազդեցությունը երեխաների ստեղծագործական ունակությունների զարգացման վրա, շրջակա միջավայրի նկատմամբ հոգատարության սերմանելու գործում:

16) Միրզոյան Սեդա – Ավարատական աշխատանքի թեման է «Լեկալային կորագծեր» թեմայի դասավանդման առանձնահատկությունները ավագ դպրոցի ինժեներական ենթահոսքում», ղեկավար՝ տեխ.գիտ.թեկն., դոցենտ Ս.Ռ.Վարդանյան:

Ս.Միրզոյանը ներկայացրել է, որ ուսուցման մեթոդների և միջոցների օգնությամբ հնարավոր է զարգացնել ավագ դպրոցի ինժեներական ենթահոսքում սովորողների գրաֆիկական հմտությունները: Ներկայացրեց կոնային հատվածների կորագծերը (Էլիպս, պարաբոլ, հիպերբոլ), սինուսիդը, Արքիմեդի պարուրագիծը, ցիկլոիդանման կորագծերը:

17) Ավետիսյան Աննա – Ավարատական աշխատանքի թեման է «Տեխնոլոգիա» առարկայի «Կարպետանախշեր» թեմայի դասավանդումը 7-րդ դասարանում՝ ինտերակտիվ մեթոդի կիրառմամբ», ղեկավար՝ տեխ.գիտ.թեկն., դոցենտ Ս.Ռ.Վարդանյան:

Ա.Ավետիսյանը ներկայացրեց հայկական կարպետագործության մեջ կիրառվող զարդանախշերը և դրանց նշանակությունը: Ներկայացրեց կարպետագործության, ինչպես նաև գորգագործության իրականացման տեխնիկան, նյութերը և

սարքավորումները: Ա.Ավետիսյանը մշակել էր նաև «Կարպետանախշեր» թեմայի դասավանդման մեթոդիկան՝ կիրառելով ժամանակակից կրթական մեթոդներ:

18) Հովհաննիսյան Անահիտ– Ավարատական աշխատանքի թեման է «Առանցքակալային հանգույցներ» թեմայի դասավանդումը միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում՝ ՏՀՏ-ների կիրառմամբ», ղեկավար՝ տեխ. գիտ. թեկն., դոցենտ Ս.Ո. Վարդանյան:

Ա.Հովհաննիսյանը ներկայացրեց, որ իրականացրել է մասնագիտական գրականության վերլուծություն «Առանցքակալային հանգույցներ» թեմայից, ուսումնասիրել է ուսումնական գործընթացի կազմակերպումը, մեթոդները և տեսակները, մշակել միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում «Առանցքակալային հանգույցներ» թեմայի դասավանդման մեթոդիկան:

Արտահայտվեցին տեխ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա.Բ.Սահրադյանը, տեխ. գիտ. թեկնածու, դոցենտներ Բ.Ա. Խողերյանը, Ս.Ո. Վարդանյանը, Ն.Ա. Օրոյանը, դոցենտ Ա.Հ. Հարությունյանը, և ֆիզ.- մաթ. գիտ. թեկնածու, պրոֆ. պաշտ. Տ.Մ. Այվազյանը, ովքեր նշեցին որ ուսանողները պատշաճ կերպով կատարել և ներկայացրել են իրենց կողմից կատարված ավարտական աշխատանքները: Առաջարկեցին երաշխավորել պաշտպանության:

Քննարկման արդյունքում

ՈՐՈՇԵՑԻՆ –1) 2022-2023 ուսումնական տարվա հեռակա բակալավրիատի ավարտական աշխատանքները երաշխավորել պաշտպանության:

2) Հանձնարարել ղեկավարներին մինչև պաշտպանությունը հսկել թերությունների վերացումը:

Նիստի նախագահ՝		Ա.Բ. Սահրադյան
Քարտուղար՝		Ս.Ո. Վարդանյան

2023թ. հունիսի 15-ին կայացած Տեխնոլոգիական

կրթության ամբիոնի նիստի

Օրակարգում՝

1. Հեռակա ուսուցման ուսումնական գործընթացների ընթացքն ամբիոնում:
2. Պետական ավարտական որակավորման քննությունների արդյունքների ամփոփում:
3. 2-րդ կիսամյակի դասալսումների արդյունքները:
Ջեկուցող՝ դոցենտ Ս.Վարդանյան
4. Հեռակա ուսուցման բաժնի միջանկյալ և ամփոփիչ քննությունների քննատոմսերի քննարկում և հաստատում:
5. Ընթացիկ հարցեր:
 - 5.1 Տեխնոլոգիական կրթության ամբիոնի հայցորդ Պետրոսյան Դավիթի «Տեխնոլոգիա» և դպրոցական պարտադիր առարկաների շրջանակներում «Զարդագործական արվեստ» դասընթացի դասվանդման մեթոդիկան (Սովորողների մասնագիտական կողմնորոշման համատեքստում)» թեմայի քննարկումը և հաստատումը:
 - 5.2 «Տեխնոլոգիա և ձեռնարկչություն» մասնագիտության պետական ավարտական որակավորման քննական հանձնաժողովի նախագահ, տեխ. գիտ. դեկտոր, պրոֆեսոր Ա.Յ. Խաչատրյանի հաշվետվության մասին:

Նիստին մասնակցում էին Տեխնոլոգիական կրթության ամբիոնի բոլոր անդամները, ամբիոնի հայցորդ Դ.Պետրոսյանը և Մանկավարժության տեսության ամբիոնի պրոֆեսոր, մանկ. գիտ. դոկտոր Լ.Թ.Ասատրյանը (ներկայաթերթը կցվում է):

Միաձայն հաստատվեց օրակարգը:

1. ԼՍԵՑԻՆ – Ուսումնական գործընթացների ընթացքն ամբիոնում:
ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-1) Ս.Վարդանյան-Ես դասավանդում եմ հեռակա ուսուցման 1-ին, 2-րդ և 3-րդ կուրսերում: Դասընթացներն ընթանում են նորմալ, բացակայություններ գրեթե չեն լինում:

2) Ա.Հարությունյան-Ես դասավանդում եմ բակալավրիատի 1-ին, 2-րդ կուրսերում «Տեխնոլոգիական պրակտիկում» առարկան և 4—րդ կուրսում «Մասնագիտական կողմնորոշում» և «Էրգոնոմիկա» առարկաները: Ամեն ինչ նորմալ է:

3) Ն.Օրդյան- Ես դասավանդում եմ 4-րդ կուրսում «Տեխնիկական առարկաների դասավանդման մեթոդիկա» և «Հագուստի պատրաստման տեխնոլոգիա» առարկաները: Ուսանողները սիրով մասնակցում են դասերին: Ինձ մոտ նույնպես ամեն ինչ նորմալ է:

4) Բ.Խոդերյան-Դասավանդում եմ հեռակա ուսուցման 4-րդ կուրսում «Ագրոտեխնիկական մեքենաներ» առարկան: Ամեն ինչ նորմալ է, բացակայություններ գրեթե չեն լինում:

5)Տ.Այվազյան-Ես դասավանդում եմ 4-րդ կուրսում «Հիդրավլիկայի և ջերմատեխնիկայի հիմունքներ» առարկան: Դասընթացներն ընթանում են բնականոն հունով: Ամեն ինչ նորմալ է:

6)Ա.Սահրադյան- Դասավանդում եմ հեռակա ուսուցման 2-րդ կուրսում «Կոնստրուկցիոն նյութերի տեխնոլոգիա» առարկան: Արդեն ավարտել ենք դասընթացները: Ուսանողներին տրված է գնահատվող առաջադրանք: Նախապատրաստվում են միջանկյալ քննություններին:

Քննարկման արդյունքում

ՈՐՈՇԵՑԻՆ –Ուսումնական գործընթացների վիճակը համարել բավարար:

2. ԼՄԵՑԻՆ- Պետական ավարտական որակավորման քննությունների արդյունքների ամփոփում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Ա.Սահրադյան-Հարգելի գործընկերներ ավարտվեց այս ուսումնական տարվա պետական ավարտական քննությունները: Նշեմ, որ բոլոր ուսանողները ստացան դրական գնահատական: Մագիստրատուրայում ունենք 3 ուսանող, որոնք ստացել են գերազանց գնահատականներ, առկա բակալավրիատում ունենք 3 ուսանող, ովքր ստացել են լավ գնահատական: Իսկ հեռակա կուրսում ունեցանք 9 գերազանց, 9 լավ և 1 բավարար պատասխաններ: Կարծում եմ, ու արդյունքները գոհացուցիչ են:

Քննարկման արդյունքում

ՈՐՈՇԵՑԻՆ- Պետական ավարտական որակավորման քննությունների արդյունքները համարել բավարար:

3. ԼՍԵՑԻՆ-2-րդ կիսամյակի դասալսումների արդյունքները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Ա.Սահրադյան- Այս կիսամյակում մեկական դասալսումներ եմ իրականացրել բոլոր դասախոսների մոտ: Դասերի ընթացքը նորմալ էր: Ուսանողներն ակտիվ մասնակցում էին դասապրոցեսին: Իհարկե կային աննշան թերություններ, սակայն վստահ եմ, որ մյուս ուսումնական տարում այն կշտկվի:

Քննարկման արդյունքում

ՈՐՈՇԵՑԻՆ-2-րդ կիսամյակի դասալսումների արդյունքները համարել բավարար:

4. ԼՍԵՑԻՆ - Հեռակա ուսուցման բաժնի միջանկյալ և ամփոփիչ քննությունների քննատոմսերի քննարկում և հաստատում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Ս.Վարդանյան-Հարգելի դասախոսներ հունիսի 26-ից սկսվում է հեռակա բաժնի միջանկյալ ստուգումները: Առաջարկում եմ միջանկյալ ստուգման տոմսերը հաստատել այսօրվա անիս-ամսաթվով՝ 15.06.2023թ.-ով:

Քննարկման արդյունքում

ՈՐՈՇԵՑԻՆ- Հեռակա ուսուցման բաժնի միջանկյալ ստուգումների քննատոմսերը հաստատել 15.06.2023թ-ով:

5. Ընթացիկ հարցեր

5.1 ԼՍԵՑԻՆ – Ամբիոնի հայցորդ Դավիթ Պետրոսյանի գիտական ղեկավարի և թեկնածուական ատենախոսության թեմայի քննարկում և հաստատում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ամբիոնի դոցենտ, տեխնիկական գիտությունների թեկնածու Նունե Ալբերտի Օրդյանը ներկայացրեց ամբիոնի հայցորդ Դավիթ Պետրոսյանին:

Հայցորդ Դ.Պետրոսյանը արդեն իսկ ունի որոշակի հետազոտական աշխատանք, ինչպես նաև 4 տարվա դասավանդման փորձ:

Որպես թեկնածուական ատենախոսության թեմա առաջարկվում է «Տեխնոլոգիա» և դպրոցական պարտադիր առարկաների շրջանակներում «Զարդագործական արվեստ» դասընթացի դասավանդման մեթոդիկան» (Սովորողների մասնագիտական կողմնորոշման համատեքստում), իսկ որպես գիտական ղեկավար առաջարկվում է մանկ.գիտ.դոկտոր, պրոֆեսոր Լատիրա Թոռնիկի Ասատրյանի թեկնածությունը, ով տվել է իր համաձայնությունը:

Հայցորդին տրվեցին հարցեր թեմայի արդիականության և հիմնավորվածության տեսանկյունից, որոնց նա պատասխանեց:

Արտահայտվեցին տեխ.գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա.Բ.Սահրադյանը, տեխ. գիտ. թեկնածու, դոցենտներ Բ.Ա. Խողերյանը, Ս.Ո. Վարդանյանը, Ն.Ա. Օրդյանը, ֆիզ. մաթ. գիտ. թեկնածու, պրոֆ.պ. Տ.Մ. Այվազյանը, դոցենտ Ա.Հ. Հարությունյանը, ովքեր նշեցին, որ ատենախոսության թեման արդիական է և հիմնավորված: Առաջարկեցին հաստատել հայցորդ Դ.Պետրոսյանի գիտական ղեկավարին և ատենախոսության թեման, և ներկայացնել Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի խորհրդի քննարկմանը:

Քննարկման արդյունքում

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Հաստատել Տեխնոլոգիական կրթության ամբիոնի հայցորդ Դավիթ Պետրոսյանի «Տեխնոլոգիա» և դպրոցական պարտադիր առարկաների շրջանակներում «Զարդագործական արվեստ» դասընթացի դասավանդման մեթոդիկան» (Սովորողների մասնագիտական կողմնորոշման համատեքստում) վերնագրով ատենախոսության թեման, մանկ.գիտ.դոկտոր, պրոֆեսոր Լատիրա Թոռնիկի Ասատրյանի գիտական ղեկավարությամբ:

2. Դիմել Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի խորհրդին Տեխնոլոգիական կրթության ամբիոնի հայցորդ Դավիթ Պետրոսյանի

թեմայի հաստատման հարցը քննարկելու և ՀՊՄՀ-ի գիտական խորհրդին ներկայացնելու համար:

5.2 ԼՍԵՑԻՆ - «Տեխնոլոգիա և ձեռնարկչություն» մասնագիտության պետական ավարտական որակավորման քննական հանձնաժողովի նախագահ, տեխ. գիտ. դեկտոր, պրոֆեսոր Ա. Յ. Խաչատրյանի հաշվետվության մասին /զեկուցող Ա. Սահրադյան/:

Նոր-Գեղի պետական գյուղատնտեսական քոլեջի որակի պատասխանատու, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արմեն Յուլակի Խաչատրյանի հաշվետվությունը ավարտական որակավորումների վերաբերյալ /հաշվետվությունը կցվում է/:

Արտահայտվեցին ամբիոնի դասախոսներ տեխ. գիտ. թեկնածու, դոցենտներ Ն.Օրդյանը, Բ.Խողերյանը. Ս.Վարդանյանը, ֆիզ.մաթ.գիտ.դոցենտ., պրոֆ. պաշտոնակատար Տ.Այվազյանը, դոցենտ Ա.Հարությունյանը, ովքեր նշեցին, որ նախագահ Ա.Յ.Խաչատրյանի կողմից արված բոլոր դիտողությունները և առաջարկությունները միանգամայն ընդունելի են և կիրառելի հաջորդ ուսումնական տարիների համար:

Քննարկման արդյունքում

ՈՐՈՇԵՑԻՆ-1/ Պետական ավարտական որակավորման քննական հանձնաժողովի նախագահ, տեխ. գիտ. դեկտոր, պրոֆեսոր Ա. Յ. Խաչատրյանի հաշվետվությունը պետական ավարտական որակավորումների վերաբերյալ ընդունելի գիտություն:

2/ Քննական հանձնաժողովի նախագահ, տեխ. գիտ. դեկտոր, պրոֆեսոր Ա. Յ. Խաչատրյանի հաշվետվությունում առկա դիտողությունները և առաջարկությունները ընդունելի կատարում:

Նիստի նախագահ՝		Ա.Բ. Սահրադյան
Քարտուղար՝		Ս.Ո. Վարդանյան

2023 թ. հունիսի 4-ին կայացած Տեխնոլոգիական կրթության ամբիոնի նիստի

Օրակարգում

1. Հաշվետվություն 2022-2023 ուս.տարվա ամբիոնի կատարած աշխատանքների քննարկում և գնահատում:
2. 2023-2024 ուս.տարվա ամբիոնի ուսումնական ծավալների և պրոֆեսորադասախոսական անձնակազմի ծանրաբեռնվածությունների քննարկում:
3. Ընթացիկ հարցեր:

Նիստին ներկա էին ամբիոնի դասախոսները և աշխատակիցները (ներկայաթերթը կցվում է):

Միաձայն հաստատվեց օրակարգը:

1. ԼՍԵՑԻՆ- Հաշվետվություն 2022-2023 ուս.տարվա ամբիոնի կատարած աշխատանքների քննարկում և գնահատում:


ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Ա.Սահրադյան-Հարգելի դասախոսներ Ձեր ուշադրությանն եմ ներկայացնում մեր ամբիոնի 2022-2023 ուս. տարվա տարեկան հաշվետվությունը, որում նշված է ամբիոնում կատարված աշխատանքների մասին: /հաշվետվությունը կցվում է/:

ՈՐՈՇԵՑԻՆ-2022-2023 ուս.տարվա հաշվետվությունը հաստատել և ընդունել ի զիտություն:

2. ԼՍԵՑԻՆ-2023-2024 ուս.տարվա ամբիոնի ուսումնական ծավալների և պրոֆեսորադասախոսական անձնակազմի ծանրաբեռնվածությունների քննարկում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Ամբիոնի վարիչ Ա.Սահրադյանը խոսեց ամբիոնի բեռնվածքների մասին, նշեղ, որ ամբիոնը ունի 4.75 հաստիք, որոնք բաշխվել է 6 դասախոսների միջև /հաստիքակազմը կցվում է/: Օգոստոսի 25-ին տեղի կունենա դասաբաշխման վերանայում՝ ըստ ուսանողների թվաքանակի:

ՈՐՈՇԵՑԻՆ-2023-2024 ուս.տարվա ամբիոնի ուսումնական ծավալների և պրոֆեսորադասախոսական անձնակազմի ծանրաբեռնվածությունները ընդունելի գիտություն:

Նիստի նախագահ՝		Ա.Բ. Սահրադյան
Քարտուղար՝		Ս.Ո. Վարդանյան